

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### **Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԵՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ



ՊԱՏԵՐԱԶՄ...  
ԱԶՔԵՐ...  
ԹԱՂԻԿՆԵՐ...

ՀԵՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

**ՊԱՏԵՐԱԶՄ...  
ԱՉՔԵՐ...  
ԾԱՂԻԿՆԵՐ...**

Ստեփանակերտ - 2017

ՀՏԴ- 821.19Ավագյան  
ԳՄԴ- 84(5Հ)  
Ա 770

**ՀՈՐՄ՝ ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇՎՏԱԿԻՆ**

Ավագյան Հերմինե  
Ա 770 **Պատերազմ..., Աչքեր..., Ծաղիկներ.../** Հ. Ավագյան.- Եր.:  
Ստեփանակերտ: «Գիգակ պլյուս» հրատ., 2017, 58 էջ:

Այնտեղ, ուր կա պատերազմ, կա կիսատ մնացած ինչ-որ բան՝  
մանկություն, սեր, երազանք, կյանք... Մարդը շարունակում է ապրել՝  
իր մեջ կրելով կիսատը, որը ոչ մի բանով լցնել, ամբողջացնել  
հնարավոր չէ: Մարդը պատերազմ չի ուզում, բայց պատերազմը  
«հարմարվել է» մարդուն...

ՀՏԴ- 821.19Ավագյան  
ԳՄԴ- 84(5Հ)

ISBN 978-9939-1-0648-9

© «Գիգակ պլյուս» հրատ., 2017

## ՀԱՅՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՄԱՆԿԱՐ՝ ԱՌԱՆՑ ՎՐՁՆԻ...

Ես նրան չեմ հիշում: Հաճախ եմ փորձել մտովի կառուցել նրա պատկերը. սկզբում գծել եմ դեմքը, հետո աչքերը, բայց երբեք իմ կառուցած պատկերը նման չի եղել ինձ նայող նկարին. ավելի ճիշտ՝ ես չեմ կարողացել մինչև վերջ ուրվագծել հորս աչքերը: Նկարից ինձ նայող աչքերում ինչ-որ բան միշտ ավելի է եղել, ինչ-որ բան, որ անհնար է մտովի նկարել. հետո եմ հասկացել՝ նրա աչքերում անչափ շատ է սերը, անբացատրելի, տիեզերական սերը, իսկ իրական սերը երեւի հնարավոր չէ մտքով նկարել:

Ես նրան չեմ հիշում եւ այդ պատճառով հաճախ եմ գգում մի բան չունենալու դատարկություն, որը ոչ մի բանով չես լցնի, անգամ հուշերով, քանզի չունեն դրանք: Հուշերը հաճախ փրկում են, բայց եթե դրանք ունենում ես: Մանկությունս հիշում եմ միայն 5-6 տարեկանից, իսկ այդ հուշերում նա արդեն չկա...

Ասում են՝ նա կենսուրախ մարդ էր, ուստի՝ ես նրա մասին տխրությամբ չեմ խոսի: Ինձ համար նա մորս պատմած հեքիաթների գլխավոր հերոսն է... Ինձ համար նա հեքիաթներից դուրս էլ հերոս է...

Ամենամեծ բանը, որ կուզեի, նրա չափ սիրել կարողանալն է...

Պատերազմից շատերն ունեն լուսանկարներ, շատերն են երեւում տարբեր տեսաերիզներում, շատերն են արժանի երեւալու, բայց հաճախ երեւում են նաեւ նրանք, ովքեր կապ չունեն պատերազմի հետ: Ես երկար, շատ երկար եմ փորձել նրան գտնել որեւէ լուսանկարում, որեւէ տեսաերիզում, բայց ապարդյուն. նա ոչ փամփուշտակալով նկար ունի, ոչ ինքնաձիգով (իր ձեռքով սարքված), ոչ ժպտալիս, ոչ էլ տխուր: Նա միշտ սիրել է նկարվել, բայց ոչ պատերազմի ժամանակ...

Երբ հայրս իր ընկերոջ՝ Ջիվանշիր Քոչարյանի հետ ինքնաշեն զենքեր էր պատրաստում, շատերի համար դա խենթություն էր: Հետո նա ապացուցեց, որ մի քիչ խենթ է, բայց ոչ թե ինքնաշեն զենք պատրաստելու, պատերազմին նախապատրաստվելու հարցում, այլ հայրենիքի հանդեպ ունեցած սիրո հարցում: Սերը հաճախ է տանում խենթությունների: Երբ սրտիդ մեջ մի ողջ հայրենիք ես ունենում, ո՞վ գիտե, գուցե մի քիչ խենթանում ես, մոռանում անձդ, նվիրվում գործիդ...(Երանի՛ խենթերին, որովհետեւ եթե նրանք

չխենթանային, ամեն բան շատ եւ շատ ուրիշ կլիներ կամ էլ՝ չէր լինի պարզապէս)...

Երբ ստեղծվեց մեր գյուղի կամավորական ջոկատը (շրջանում՝ առաջինը) հայրս չէր ուզում գլխավորել այն: Նա հատուկ կրթութիւն չուներ, դպրոցում միջակ սովորող էր, մասնագիտութեամբ գինեգործ էր, մորից նաեւ դերձակութիւն էր սովորել: Տղերքը պնդեցին՝ կամ Արմենը պիտի լինի, կամ՝ ոչ ոք: Նա գլխավորեց ջոկատը, հետո նաեւ դասակը, վաշտը... Նրա հանդէպ հարգանքը եւ սերը հավասար նժարների վրա էին, ու դրանից դարձյալ շահում էր Գործը...

Մի օր մարտից հետ չեկավ. ծանր մարտ էր Ավդալ-Գյուլաբլու կոչվող տեղամասում: Դա 1992թ. մայիսի 15-ն էր: Ոչ ոք կարգին լուր չբերեց նրանից, ոմանք էլ հակասական բաներ էին ասում: Մայրս ասում է, որ 15 օր շարունակ մի թռչնակ ամեն օր ծեծում էր մեր պատուհանը եւ արտասովոր ձայն էր հանում: Թռչունն ինչ-որ բան էր ուզում ասել երեւի... Երանի՜ հասկանայինք թռչունների լեզուն.... Միայն 15 օր հետո բերեցին նրան, ասացին, որ նա է... Մայրս չի սիրում խոսել այդ մասին, երբ հարցեր են տալիս, չի պատասխանում, փոխում է զրույցի թեման, բայց ես գիտեմ՝ նա միշտ սպասել է նրան, որովհետեւ հոգու խորքում՝ մտածել է, որ մի օր կգա...

Երբ դրսում խաղում էինք, ու հայրերը կանչում էին իրենց փոքրիկներին, երբ նրանք էլ «հայրիկ» էին ասում, ես խռովում էի, մի կողմ քաշվում: Զիմա ես չեմ խռովում դրանից, ես ի սրտե ուրախանում եմ բոլոր նրանց համար, ովքեր «հայրիկ» են կանչում եւ ուզում են, որ նրանք միշտ կանչեն... Դա աշխարհի ամենաուժեղ բառն է...

## ԹԵՐԹԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Այս պատմությունը հորինել է ինչ-որ մեկը, հորինել է այն ժամանակ, երբ ես դեռ լույս աշխարհ չէի եկել, հորինել է այն բանի համար, որպեսզի երբ ես գամ, այն արդեն լինի: Այս պատմությունը ես չեմ գրել, ես պարզապես արտագրել եմ այն իմ մաքուր տեսրում, ասել է թե՛ ապրել եմ այն: Ես չգիտեմ այս պատմությունն ինչպես կոչել, քանզի եթե ես չեմ գրել այն, ապա վերջաբանն էլ հայտնի չէ, ո՞վ գիտե, գուցե վերջում, իրոք, երկնքից երեք խնձոր է ընկնելու, եւ մեկն ասելու է՝ մեկը գրողին, մեկը կարդացողին, մեկն էլ նրան, ով արտագրել-ապրել է այն...

Այս պատմության էջերը թերթել է պատերազմը եւ յուրաքանչյուր էջում ինչ-որ գրություն է թողել, որն այլեւս ոչ մի ռետինով ջնջել հնարավոր չէ: Հնարավոր չէ նաեւ պոկոտել էջերը, քանզի ամեն էջի վերջ մյուսի սկիզբն է... Ուրեմն՝ ես կպատմեմ պատերազմի մասին...

Մարդու աչքերը կոչված են տեսնելու, եւ երբեմն աչքերն ավելին են զգում, քան սիրտը, որ ներսում է եւ կոչված է զգալու: Պատերազմ տեսած աչքերը մի քիչ ուրիշ են լինում, չգիտեմ ինչ բառով է դա կոչվում, բայց նրանք, հաստատ, տարբեր են լինում: Այդ աչքերը հաճախ հնարավոր է տարբերել հազարների մեջ: Այս պատմությունը աչքերի մասին չէ, բայց նրանք են ամեն բան տեսել...

Ամեն մի պատմություն հուշեր է թողնում՝ լավ կամ վատ. դա կախված է այն բանից, թե մարդիկ ինչպիսիսն են ուզում հիշել այն: Հուշերը մի քիչ նման են ծաղիկների. կան հուշեր, որ ծաղիկների գույն ունեն, կան հուշեր, որ բուրում են ծաղիկների պես, եւ կան նաեւ այնպիսիները, որ ծաղիկների պես չեն թառամում: Այս պատմության մեջ շատ են անթառամ ծաղիկները...

Այս պատմությունը հորինել է ինչ-որ մեկը, բայց ես կբացեմ դեպի պատմության խորքը տանող պատուհանները, մի՞ գուցե այդ ընթացքում, երբ դուք կկարդաք այն, երկնքում արեւ լինի, եւ պատուհանից արեւը ներս ընկնի. կնշանակի՞ դա երջանկության նշան է կամ Ձեզ, կամ ինձ համար... Այս վերջինն ասացի պարզապես, որպեսզի ժպտաք, քանի որ ամեն մի գործ սկսելուց առաջ կարելու է ժպտալը: Կարդալն էլ գործ է...





Իմ մանկության արահետը

*Մանկությունից շատ քիչ բան եմ հիշում, բայց կա մի արահետ, որ մնացել է հիշողությանս մեջ: Երբ «մանկություն» են ասում, ես ակամայից հիշում եմ այդ արահետը...*

- Օմօնականե՛րը... օմօնականները գալի՛ս են,- գյուղի մի ծայրից ձայն է տալիս մեկը, եւ ձայնը բոթի պես հասնում է գյուղի բոլոր փողոցները, անցնում դատարկ գյուղամիջով, ներքեի թաղից շտապում մինչեւ վերին թաղը, թափանցում բոլորի տները:

- Տղամարդիկ թող թաքնվե՛ն,- բարձրաձայնում են կանայք:

- Մարինե՛, դու գնա զենքը թաքցրու, ես էլ Հերմիներին կտանեմ դեպի Ոսկե խաչ,- անհանգստանում է տատս:

- Երեխան թող մնա տանը, ի՞նչ կարող են անել երեխային,- տազնապում է մայրս:

- Ամեն բան սպասելի է: Տեսա՞ր՝ անցած անգամ երեխան ինչպես նայեց դրանց զենքերին ու լաց եղավ: Գիտե՛ր՝ հոր զենքերից է, ուզում էր վերցնել: Իսկ այն ճիվաղ օմօնականը ասաց քթի տակ. «Գիտի թե խաղալիք է, երեւի հոր ձեռքին շատ է տեսել»: Չգիտեի, որ թուրքերեն լավ հասկանում եմ: Ծնկներս թուլացան, մի կերպ թաքցրի անհանգստությունս:

- Մտածում ես, որ կարող են երեխային ...- մայրս դողաց, չշարունակեց:

- Կարող են... կարող են տանել ու փոխարենը շատ բան պահանջել Արմենից, դրանք անասովածներ են,- ասաց, ամուր գրկեց ինձ ու շտապ դուրս եկավ:

Դարպասը տատի հետեւից դմբոցով փակվեց, իսկ մայրս մի քանի րոպե մնաց քարացած: Հետո հիշեց, որ անելիք ունի: Արագ քայլերով մտավ տուն, բազմոցի տակից հանեց հայրիկիս ինքնաշեն զենքերից մեկը, որ միշտ տանն էր պահում, եւ շտապեց այն ասպահով տեղում թաքցնելու:

Տատս ինձ տարավ ծուռումուռ մի արահետով, որն անցնում էր անտառի միջով: Երբ տատս հիմա պատմում է ինձ այդ մասին, ես արահետն եմ միայն հիշում, մեկ էլ՝ թարմ տերեւների բույրը, որով շնչում էր անտառը: Ես շնչում էի այդ բույրը եւ ամենեւին չէի հասկանում, որ ան-

տառից այնկողմ շատ վատ բաներ են կատարվում, այնքան վատ, ինչպիսի վարքագիծ ավելի շատ անտառի գազաններին է հատուկ, քան՝ մարդ արարածին: Ես դեռ չգիտեի, որ աշխարհում մարդ-գազան էլ գոյություն ունի...

Արահետը մեզ հասցրեց Ոսկե խաչ կոչվող աղբյուր, որը գյուղից քիչ հեռու էր: Աղբյուրի մոտ փոքրիկ հողամաս ունեինք, որտեղ այդ տարի առատ լոբի էինք ցանել: Լոբու մարգերի արանքում թաքցրեց ինձ, ինքն էլ կողքիս կուչ եկավ:

Բուպեններ անց օդը լցվեց ճանապարհի փոշով: Ուղիղ աղբյուրի մոտ կանգ առավ «ԲՄՊ»-ն, նրա հետեւից՝ մի վիլիս: Լսվում էին կես ռուսերեն, կես թուրքերեն խոսակցություններ:

Տառս լարվեց: Խոսակցությունից հասկացավ, որ այս անգամ կոնկրետ ինչ-որ մեկի հետեւից են եկել, հատուկ նպատակ ունեն: Հետո մեկը քմծիծաղեց ու թուրքերենով ինչ-որ բան ասաց: Տառս հասկացավ:

- Անշուշտ, մոտակայքում է, կբռնենք, գիտի, թե ամբիոնից ճառեր ասելը հեշտ է մարսելու,- տառս մտքում թարգմանեց ու զգաց, թե ինչպես սառը քրտինքը պատեց մարմինը:

Խոսքը գյուղի կոլտնտեսության նախագահ Էմիլ Բալայանի մասին էր, ով Մարտունիում ելույթ էր ունեցել ժողովրդի առջեւ եւ համախմբման կոչ արել:

- Բարո, ո՞ր է տիկնիկս,- ասացի եւ ուզում էի լացել:

Տառս մատով աստեղ, ապա մի կտոր հաց դնելով ձեռքիս՝ ամուր սեղմեց կրծքին:

- Էս մարդիկ վատ մարդիկ են, նրանք թող գնան, մենք էլ կգնանք տուն:

Քիչ անց «ԲՄՊ»-ն շարժվեց Քարհարտ կոչվող տեղամասի ուղղությամբ, վիլիսը հետեւեց նրան:

- Տեր Աստված, սիրտս վատ բան է գուշակում,- տառս հայացքը հանեց դեպի երկինք եւ խաչակնքեց:

- Բարո՛, բարո՛, ...

- Սո՛ւսս...

- Բարո՛, պապան գա թուրքին բռնի, չէ՞...

-Սո՛ւսս...

Հետո ամեն բան լռեց: Լոբու տերեւները քսվեցին դեմքիս, եւ ես ահավոր քոր զգացի: Ուզում էի լացել, բայց վախենում էի՝ չիմանալով ինչու՞, ինչի՞ց:

Քիչ հետո ԲՄՊ-ն հետ եկավ, հետո շարժվեց գյուղից դուրս տանող ճանապարհով, վիլիսը հետետում էր նրան: Վիլիսում մեկին կապկապած տանում էին: Նրանց հետեից թանձր փոշի բարձրացավ: Տատս չոքեց գետնին, ձեռքերը զարկեց ծնկներին.

- Ոնց որ թե Էմիլին բռնեցին,- ասաց ու ախ ու վիշ արեց:
- Բարո, տո՛ւն, տո՛ւն...
- Վե՛ր կաց, վե՛ր կաց, գնանք տեսնենք էս ինչ օյին է...

Արահետը նորից մեզ տուն տարավ, բայց այս անգամ տատս չէր թողնում, որ շնչեմ տերեւների բույրը, նա շեղում էր ուշադրությունս իր ձայնով: Նա շատ կամաց էր խոսում, քթի տակ, ու ես ջանում էի լսել:

- Անիծվե՛ք, անիծվե՛ք...

Միայն դա էի լսում....

Երբ հասանք գյուղ, մեծ աղմուկ լսեցինք, ոմանք լաց էին լինում: Տատի անհանգստությունը ճիշտ էր, օմօնականները ոչ միայն քանդել ու ոտնատակ էին տվել գյուղացիների տները, այլև եկել էին կոնկրետ մարդու՝ Բալայանի հետեից: Բալայանը հասցրել էր թաքնվել անտառում, բայց օմօնականներին հաջողվել էր նրան գտնել...

Մի կին լացելով մոտեցավ տատիս, գրկեց նրան ու սկսեց հեկեկալ.

- Նաիրա՛, Արմենին ասա՛ մի բան անի, միայն Արմենը կարող է նրան հետ բերել...

Տատս լաց եղավ:

- Բարո՛, բարո՛, - ես նորից ինչ-որ բան էի փորձում թոթովել:
- Սո՛ւսս...

Գիշերը ես երազ տեսա. իբր մեծ, շատ մեծ աղջիկ էի եւ վազում էի ծուռումուռ արահետով, արահետը ծաղկել էր բազմերանգ ծաղիկներով, տերեւները բուրում էին առաջվա պես, եւ ինձ ոչինչ չէր խանգարում անհագորեն շնչելու անտառի բույրը...



# ԼՈՒՍԱՍՈՒՏ ԵՐԿՐՈՐԴ

## Քանաճելը

Երկու Արմենները եւ մուշկապատցի Աբրիկը ( նա լավ տիրապետում էր աղբբեջաներենին եւ հատուկ ուղարկվել էր Ավոյի կողմից, որպեսզի աղբբեջանցիների հետ բանակցությունների ժամանակ օգնի ) մեքենայով բերում էին աղբբեջանցի պատանդին: Ճանապարհին մեքենան փչացավ, փորձեցին սարքել, բայց չստացվեց: Մինչեւ գյուղ դեռ ճանապարհ կար, պետք էր անցնել հարեւան երկու գյուղերով: Եղանակը ցուրտ էր, անձրեւոտ: Արմեններն իրար նայեցին: Լռությունը կտրեց Ղայամյանը:

- Համարյա մթնել է, ի՞նչ պիտի անենք, Ավագյան:

Երկրորդ Արմենը հապաղեց:

- Հը՞, Ավագյան, ի՞նչ ես մտածում,- խոսեց նորից:

- Ի՞նչ պիտի անենք,- այս անգամ պատասխանի չսպասելով՝ տվեց իր իսկ հարցի պատասխանը,- սրան հենց այստեղ սատկացնում ենք ու հանգիստ քայլում դեպի գյուղ:

- Կատակելու ժամանակ չունեն, Ղայամյան, դու ոտքերից բռնիր, ես՝ գլխից: Մենք նրան շալակած պիտի տանենք:

- Ի՞նչ, սրա՞ն շալակենք, սրանից գարշահոտ է գալիս:

- Նա մեզ պետք է:

- Ես չեմ կարող, անտանելի է, խնդրում եմ՝ այդ մի բանը ինձ մի պարտադրիր:

- Ուրեմն մենակ կշալակեմ ու կտանեմ:

- Ես կօգնեմ,- խոսեց Աբրիկը:

- Ոչի՞նչ, ես կտանեմ:

Այս ասելով՝ շալակեց թուրքին եւ թեքվեց դեպի անտառ տանող ճանապարհը:

- Մենք անտառով կգնանք, այդպես ավելի կարճ է, մեկ-երկու ժամից կհասնենք գյուղ:

Պատանդը մոտ 16 տարեկան էր: Նա երբեմն ծանր տնքում էր, չափազանց հյուծված լինելու պատճառով՝ մարմնի ոչ մի մասը չէր շարժում:

- Թու՛, գարշելի է սրա հոտը...

Ղայամյանը երբեմն պոռթկում էր, իսկ Ավագյանը սուս ու փուս տա-

նում էր պատանդին: Արթիկը ժամանակ առ ժամանակ փորձում էր օգնել:

Երբ հասան գյուղ, հենց տան դարպասների մոտ ցած դրեց գերուն, սրբեց քրտինքը եւ շունչ քաշեց: Ղայամյանը ապշահար նրան էր նայում եւ չգիտեր՝ ինչ ասեր:

- Ներիք, որ չօգնեցի:

- Ոչինչ...

Հետո Ղայամյանն ուզեց էլի բան ասել, բայց չասաց: Նա ուզում էր ասել, որ հիանում է դպրոցական ընկերոջով, նրա գործով, բայց ներքին մի բան, տղամարդուն հատուկ մի բան, հետ պահեց նրան:

Տանը սպասում էին, բոլորն արթուն էին:

- Մարինե՛, շաքար ունե՞նք,- դիմեց մորս:

- Երեխայի համար երկու հատ պահած ունեմ...

- Բե՛ր...

- Նրա համա՞ր...

- Մի բաժակ գոլ ջուր էլ կբերես, նա շատ թույլ է, պետք է կաթիլ - կաթիլ խմեցնեմ, տեսնենք՝ մի քիչ ուշքի կգա՞, թե չէ:

- Բայց...

- Բե՛ր...

Մայրս ոչինչ չասաց, թեքվեց դեպի խոհանոց եւ քիչ հետո ետ եկավ մի բաժակ գոլ ջրով ու երկու շաքարով:

Իր ձեռքով գդալ-գդալ քաղցրաջուրը խմեցրեց պատանդին: Վերջինս աղբբեջաններեն ինչ-որ բան ասաց կամաց: Տատս հասկացավ՝ շնորհակալություն էր ասում:

Պատանդին տարան հատուկ տեղում պահելու, մինչեւ փոխանակումը նա պետք է տղաների եւ բժշկի հսկողության տակ լիներ:

- Կողմնակի ոչինչ չտաք,- կարգադրեց հայրս,- մի քանի օր միայն շատ քիչ ջրիկ սնունդ կտանք, ես կբերեմ, գործ չունեք:

Երբ մենակ մնացին, Ղայամյանն ասաց.

- Վտանգավոր խաղ ես սկսել, Արմեն, մարդիկ այնքան չարամիտ են:

- Ամեն ինչ խաղ է կյանքում, Արմեն, այս պատերազմն էլ է խաղ, բայց կարելուրն այն է, որ ինքդ կարողանաս որոշել խաղի կանոնները:

- Դու ազնիվ ես գործում, ես ոչ մի բան դրան չեմ կասկածում, բայց բոլորը չեն քեզ պես մտածում, մարդիկ չարախոսում են: Գիտե՞ս, թե չար լեզուներն ինչ են ասում. «Արմենն այս ամենը հորինել է, որ թանկ

զնով առեւտուր անի թուրքերի հետ, նա հո՞ հիմար չէ, որ իր ջահել կյանքը վտանգի»: Հասկանու՞մ ես՝ նրանք կարծում են, որ դու գերուն կվաճառես թուրքերին... Տեսնու՞մ ես՝ մարդ արարածը որքան ստոր կարող է լինել:

- Ես գիտեմ, որ այդպես մտածողներ էլ կան: Թող ասեն, ինչ գլխներին փչում է:

- Վտանգավոր է, Արմեն, չե՞ս կարծում, որ իրենց ուզածը ստանալուց հետո թուրքերը քեզ կկրակեն...

- Հնարավոր չէ:

- Իսկ եթե կրակե՞ն...

- Ամեն ինչ լավ կլինի, իսկ եթե... Դու՝ Անդրանիկի, Տիգրանի, Արագի, Վրեժի եւ մյուսների հետ հեռվից կհետեւեք, եթե նկատեք, որ ուզում են կրակել, առաջինը դուք կկրակեք ինձ, լսեցի՞ր... Ես մյուսներին էլ կասեմ:

- Ի՞նչ...

- Սա հրաման է...

- Մենք չենք կարող...

- Հրամանները չեն քննարկվում...

Ղայամյանը նյարդայնացավ, բայց ոչինչ չասաց...

Գերին սովորական գերի չէր: Նրա հայրը՝ Սարգսր անունով, ով Ղարադաղլուից էր, նույնպես գերի էր ընկել հայերի մոտ՝ իր ընտանիքով ու բարեկամներով հանդերձ: Նրա եղբայրը՝ Մահմեդը, բանակցությունների անմիջական մասնակիցն էր եւ շահագրգիռ էր պատանդներին փոխանակելու հարցով: Հայրս որոշեց՝ Սարգսրին պետք է բաց թողնեն, որպեսզի գնա եւ ազդի բնակցությունների կազմակերպման վրա: Իր որոշման մասին նա ասաց Աբրիկին, Աբրիկը համամիտ էր, որովհետեւ ինքն էլ էր կարծում, որ դա հոգեբանական խաղ է, եւ հանուն իր ընտանիքի Սարգսրը չի կարող դավաճանել:

- Մենք պայման կապեցինք. նա իր որդու դիմաց կկազմակերպի ընկեր Բալայանի եւ մյուս պատանդների հանձնումը:

- Պայման թուրքի հետ,- Ղայամյանը քննադատեց:

- Նա ամեն ինչ կանի իր որդուն վերադարձնելու համար:

Հայրս հավատացած էր, որ Բալայանին հետ կբերեն: Բանակցություններն արդեն 65-68 օր է՝ շարունակվում էին եւ վերջապես պետք է հաջողությամբ պսակվեին: Բայց կատարվեց անսպասելի բան. պատանդը, որ շատ հյուծված էր, մի քանի օր հետո մահացավ: Դա ավելի

լրջացրեց վիճակը: Տղերքից ոմանք սկսեցին խորհուրդ տալ, որ հետ դառնա բռնած գործից, բայց նա իր անելիքն արդեն որոշել էր:

- Մարինե՛, կոստյումս բեր, այն կոստյումը, որ հորաքույրս էր ուղարկել Ռուսաստանից:

- Ինչի՞ համար ես ուզում:

- Բե՛ր, ժամանակ չկա:

- Չլինի՞ նրա համար ես ուզում,- տագնապեց:

- Նրան պետք է հավուր պատշաճի հանձնեն, այս գիշեր նրա համար դագաղ էլ կսարքեն:

- Ուրեմն վաղը...

- Վաղը...

- Բայց...

- Ես կգամ...

- Ինչո՞ւ ես դա անում, Արմեն,- ասաց մայրս աղեկտուր:

- Գիտե՞ս, թե ինչ է նշանակում գերի լինել թուրքի ձեռքին, երեւի լավ չես պատկերացնում...

- Բայց դու...

- Լավ նայիր երեխային...

Նա վերցրեց շորերն ու արագ դուրս եկավ...

Հաջորդ օրը կայացավ փոխանակումը: Նրան ուղեկցում էր մուշկապատոցի Աբրիկը, որ ադրբեջաներենի թարգմանության հարցում օգնի:

Համատարած լռության մեջ ոչինչ չէր երեւում, բացի անծայրածիր դաշտավայրից:

Տղաները հետեւում էին՝ ավտոմատները լարած: Թուրքերը չէին երեւում երկար ժամանակ:

- Ուշանում են,- ասաց Արազը:

- Ի՞նչ ես մտածում,- խոսեց Անդրանիկը:

- Հարկավոր է լարվել ու որսալ ամեն մի շշուկ: Գրանց վստահել չի կարելի:

- Ես պատկերացնում եմ, թե ինչ վիճակում կլինեն մեր պատանդները, երեւի գազանների պես հոշոտել են. թուրքը էդպես էլ մարդ չդարձա՛վ,- արձագանքեց Գայամյանը:

- Ոնց որ թե երեւացին,- նորից խոսեց Անդրանիկը,- տեսնենք՝ ինչ դուրս կգա ես ամենից. ինձ թվում է՝ նրանք արդեն գիտեն, թե ով է դագաղում:

- Վտանգավոր է,- Արազը լարվեց:



- Ոնց որ թե հեռվից մոտեցող կա նրանց:

- Պատանդներին բերում են...

Բանակցությունները հաջող ավարտվեցին: Բալայանը եւ մյուսները (երկու հոգի Աշանից, մեկը՝ Մարտունուց, մեկն էլ՝ Գիշի գյուղից ) անճանաչելիորեն փոխվել էին, երեսում էր, որ սարսափելի տանջանքների էին ենթարկվել:

- Տղերքը ձեզ տուն կհասցնեն մեքենայով,- Արմենը դարձավ Բալայանին:

- Արմեն,- մի կերպ արտասանեց Բալայանը...

Նա ուզում էր շնորհակալություն ասեր, բայց ձայնը նվաղել էր...

- Ի՞նչ էր ասում թուրքը քեզ, Արմեն,- հարցրեց Անդրանիկը քիչ հետո:

- Շնորհակալություն էր ասում որդու խնամված տեսքի համար, մենք էլ ասացինք, որ ներող լինի, որ չկարողացանք որդուն կենդանի պահել: Մենք իրար հասկացանք,- պատասխանեց Աբրիկը:

Տուն վերդառնալու ճանապարհին Աբրիկը ժպիտով ասաց.

- Արմեն, ինձ թվում է՝ թուրքերն էլ են քեզանով հիանում...

- Պախ-պախ-պախ,- ծիծաղեց ի պատասխան:

Ամեն մարդ ապրելու իր բանաձեւն ունի: Հայրս այս բանաձեւն էր ընտրել...



# ԼՈՒՍԱՄՈՒՏ ԵՐՐՈՐԴ

## Ամենալավ բանը

Մայիսյան անձրեւը չէր դադարում: Գյուղը խավարի մեջ էր, տների պատուհաններից առկայծում էին լամպերի թեթեւ լույսերը: Մարդիկ չէին ուզում քնել... Գյուղը սպասում էր...

Մայրս մոտեցավ սեղանին, բայց չնստեց: Տառս նկատեց հարսի հուզմունքը:

- Նա կգա, տղման տաք-տաք պահիր:

- Արդեն գիշերվա 2-ն է,- ասաց՝ առանց աչքերը բարձրացնելու:

- Կգա՛, հաստատ կգա...

- Չեմ ուզում, որ գա, վտանգավոր է:

- Վառարանը տաք պահիր, կարող է մրսած լինի, թրջված, որ չորացնենք շորերը:

Մայրս գլխի շարժումով համաձայնության նշան արեց:

Հետո իջավ լռություն:

Նա իր կյանքի 25-րդ գարունն էր դիմավորում. դիմավորում էր՝ ամուսնու թաքուն կարոտն ու սպասումը սրտումը պահած: Նա խաղաղ գարուն էր երագում իր դստեր ու բոլոր մանուկների համար... Նա ընդամենը 25 տարեկան էր դառնում, բայց նրան թվում էր՝ մի ամբողջ կյանք է ապրել... Հայրս միշտ գալիս էր ծննդյան տարեդարձերին՝ թեկուզ մի քանի բուպեով. ուր էր լինել՝ մի ելք գտնում էր՝ հապճեպ տուն գալու եւ շնորհավորելու:

Մայրս շարժվեց դեպի ննջասենյակ, որտեղ ես էի քնած: Աղոթքի հարազատ դարձած բառերը նորից ու նորից կենդանացան նրա շուրթերին, բայց այս անգամ մի ներքին տարօրինակ զգացում ուներ, հանգստության նման մի բան, ասես՝ զգում էր, որ ուր որ է՝ ինչ-որ նոր, ինչ-որ լավ բան պիտի լինի: Նա խաղաղության մոտեցող շունչն էր ասես զգում եւ չէր հասկանում՝ դա ուժգին ցանկանալու հետեւանք է, թե՞ ներքին կանխազգացում...

- Խա՛ղա՛-ղո՛ւ-թյու՛ն,- մրմնջաց աղոթքի վերջում, մրմնջաց երգի պես՝ «ամեն»-ի փոխարեն...

Աչքն ընկավ զարդասեղանին: Սեղանը դատարկ էր, միայն մեծ հայելու մեջ արտացոլվեցին նրա երկար, բարալիկ հասակը, սեւ վարսերն ու նուրբ դեմքը: Ամենագեղեցիկը, սակայն, աչքերն էին, որ արդեն, ո՞վ գիտե որքան ժամանակ է, չէին ժպտում: Նա հայելու մեջ գտավ իր նի-

հար կերպարանքը, ապա ձեռքը տարավ դեպի զարդասեղանի փոքրիկ պահարանը, շոշափեց ու առանց նայելու գտավ ինչ-որ շրթներկ: Անկեղծ մի ժպիտ կանգ առավ դեմքին: Նա հապաղեց՝ հիշելով շրթներկի պատմությունը: Դա ամուսնու նվերն էր, որ գնել էր ծննդյան նախորդ տարեդարձին:

- Պատերազմ եւ շրթներկ,- հարցրել էր զարմանքով ու կես կատակով,- որտեղի՞ց է:

- Ի՞նչ կարելու է, թե որտեղից է,- պատասխանել էր հայրս:

Պատերազմը խլել - տարել էր խանութներում եղած-չեղածը, դրսից ոչ մի բան չէր բերվում, իսկ խանութներում մնացած հատուկ բաները պահում էին միայն հատուկ մարդկանց համար:

- Սպիտակաշենի խանութից է: Տղերքի հետ երեկ գիշեր գյուղի խանութպանի տանն էինք, կարելու գործով էինք գնացել (նա չէր սիրում բացել կարելու գործերի չակերտները): Ասաց՝ կուզե՞ս փոքրիկ նվեր տամ կնոջդ համար:

Հիշողությունները լուսավոր ստվեր զցեցին դալուկ դեմքին: Նա ինքնաբերաբար շրթներկը տարավ դեպի շուրթերը, բայց նույն պահին, ասես վախեցած իր ցանկությունից, թաքցրեց այն պահարանի նույն տեղում: Քթի տակ հանդիմանեց ինքն իրեն՝ ամո՞թ ինձ, ամո՞թ ինձ... Ի՞նչ ծննդյան օր, Ի՞նչ շրթներկ...

Գիշերվա 3-ն էր, երբ երկու ստվեր հասան գյուղամեջ: Մեկը հայրս էր, որ մի քանի ժամով էր եկել...

Ես քնած էի հյուրասենյակին կից սենյակում: Իմ աչքերն էլ, ինչպես աշխարհի բոլոր փոքրիկների աչքերը, այնքան անմեղ էին, որքան ձնհալից հետո ծնված առաջին ձնծաղիկները: Նրանք ձնծաղիկների պես զարուն էին ավետում, բայց զարունը ուշանում էր. ուշանում էր մի պարզ պատճառով՝ պատերազմ էր... Պատերազմը սողոսկել էր բոլորի տները, ջարդել լուսամուտներն ու դռները, այրել բոլոր գրքերն ու դասագրքերը, մարդկանց փախցրել դեպի նկուղները, խլել տան տղամարդկանց՝ յուրաքանչյուրի տան շեմին թողնելով մի սառած սպասում, որ այլշած ուրվականի տեսք ուներ եւ դես ու դեն էր ընկնում՝ հանգստություն չգտնելով: Երբեմն գյուղամիջում ձայներ էին լսվում, եւ բոլորը վազում էին դեպի այդպիսի, շունչները պահած սպասում, թե լուր բերողը ինչ կասի՝ լա՞վ, թե՞ վատ: Երբեմն լավն էր շատ լինում, երբեմն՝ վատը, երբեմն մեկը զսպում էր հոգու փղձկոցը, մեկն էլ չէր դիմանում եւ ճշում էր անգորությունից, ջահել հարսները հաճախ ուշաթափ էին լինում, իսկ նրանց փեշերից բռնած մանուկների աչքերում սառչում էր արտասուքը, որովհետեւ սկսում էին հասկանալ, որ պատերազմը շատ դաժան բան է,

նրանք սկսում էին ասել պատերազմը, նրանք շուտ էին մեծանում....

Հայրս նայեց ինձ, դեռ 3 տարեկան չկայի: Փափուկ, ճերմակ անկողնում պառկած օրիորդիկս նման էի ձյունե թագուհու, որի քունը ոչ ոք չէր համարձակվում խանգարել: Միայն մերթրնդմերթ երկնքում ինչ-որ բան էր որոտում, եւ լավում էին պայթյունի խուլ ձայներ: Ես նման պահերին փակ աչքերով անհանգիստ շարժումներ էի անում, ապա նորից քնում՝ խոնջացած ու հարբած: Երբեմն էլ կիսաբաց աչքերով հարցնում էի՝ մա՛ն, էն ի՞նչ է:

- Ոչի՛նչ, այծերը բարձրացել են մեր տան տանիքը եւ վազվզում են դմփդմփացնելով:

- Պապիկին ասա՝ թող գնա քշի՛,- ասում էի քնաթաթախ...

Այդ օրը հայրս անընդհատ ինչ-որ բան էր խորհում: Դեմքը խոժոռ էր, աչքերը՝ մի տեսակ հոգնած, բայց քնելու եւ շունչ առնելու ժամանակ չկար, ընդամենը կես ժամով էր տուն մտել, տղերքը սպասում էին, մեծ գործ ունեին կազմակերպելու, վճռորոշ գործ էր...

- Ի՞նչ պիտի անես,- հարցրեց մայրս կես համարձակությամբ:

- Գնում եմ, հապաղելու ժամանակ չկա,- ասաց՝ աչքի պոչով նայելով ինձ: Նրա աչքերում մի պահ թախծի կայծ երեւաց, բայց նա չթողեց, որ կրակի վերածվի՝ իսկույնեւեթ այն հանգցնելով համարձակ մի ժպիտով: Հետո մոտեցավ, բռնեց փամփիլիկ աջս, սեղմեց կրծքին, ապա համբուրեց փակ աչքերս:

- Մայրիկին կլես, հաջորդ անգամ լավ բան կբերեմ քեզ համար...

- Ամենլավ բա՛նը,- արտասանեցի կիսաքուն:

Մորս աչքերից մի կաթիլ արցունք գլորվեց.. մի դավաճան, անզուսպ արցունք, որը չկարողացավ չընկնել՝ մատնելով հոգու ալեկոծումը:

- Անհանգստանալ պետք չէ... Ամեն բան ծրագրված է, վճռական մատեր են լինելու,- ասաց եւ ձեռքը դրեց կնոջ ուսին:

- Քանի՞ հոգով եք:

- Շատ,- պատասխանեց խորիմաստ ժպիտով:

Մայրս էլ ժպտաց իր հարցի համար, որովհետեւ գիտեր՝ նա միշտ այդպես է պատասխանում, թեեւ, տղաների պատմելով, երբեմն շատ բաներ միայնակ է անում՝ թույլ չտալով, որ տղաները գան իր հետ՝ չցանկանալով վտանգել նրանց կյանքը:

- Հիշու՞մ ես,- հանկարծ դարձավ մայրս,- մի օր ընկեր Բալայանն ասաց. «Տղա ջան, բա էդ ո՞նց հասկանանք, դասերդ չես սովորում, բայց ընկեր Օհանյանի ասելով՝ Ֆիզիկայի կաթինետի բոլոր փորձասարքերը դու ես քո ձեռքով պատրաստում»: Դու էլ պատասխանեցիր. «Ընկեր Բալայան, բա որ դասերս սովորեմ, ժամանակ կմնա՞ ֆիզիկայի կաթի-

նետի համար սարքեր շինելու»: Հիշում ես... Երանի՜ այն ժամանակներին:

Ասաց ու վախժորած եղնիկի պես մի պահ փախավ...փախավ ներկայից, փախավ դեպի երանելի անցյալը, երբ աշակերտ-աշակերտուհի էին, իրար կողքի էին նստում, ինքը գրում էր, տղան՝ արտագրում: Ուսուցչուհին նկատում էր, բայց չէր սաստում, արդեն գիտեր՝ սաստելը չի օգնի, քանզի նրանց սրտերում սիրո կրակ էր բռնկվել:

- Հիշում եմ,- պատասխանեց՝ ընդհատելով կնոջ մտքերի թռիչքը: Մի օր ընկեր Բալայանին տեսա գյուղամիջում, ծիծաղելով ասաց. «Այ տղա, լսել եմ՝ հիմա էլ թաքուն-թաքուն ինքնաշեն զենքեր ես պատրաստում հա՞, ի՞նչ է, պատերազմի՞ ես նախապատրաստվում»: Հա՛ ասացի, լավ կլինի դուք էլ պատրաստվեք, ու բոլորը պատրաստվեն: «Չէ՛,- ասաց Բալայանը,- Մոսկվան մեր հարցը կլուծի, ի՞նչ կռիվ, ա՛յ տղա»: «Օղից վառողի հոտ է գալիս», - ասացի՝ աչքերի մեջ նայելով: Նա ոչինչ չպատասխանեց...

- Զո կանխագագումները միշտ էլ իրականություն են դառնում: Հետո ինքն էլ դրանում համոզվեց, ինքն էլ միացավ Շարժմանը: Հենց դրա համար էին նրան բռնել օմօնականները: Խեղճ մարդ, լրիվ նիհարել է, շատ տանջված տեսք ունի: Մի քանի օր առաջ տեսա նրան, ասաց. «Լավ պահիր Արմենին, Մարինե՛»:

Լռություն...

- Բիչ է մնացել...

- Ես հավատում եմ, բայց վախենում եմ:

- Մի վախեցիր, համբերիր:

Նրանց աչքերը մի քանի րոպե գտան իրար: Լռության մեջ մորս աչքերն ասես հարցրին.

- Կգա՞ս...

- Կգամ...

Նա շրջվեց: Մորս ունկերում մարեցին նրա հեռացող ոտնաձայները...

Ամենալավ բանը չուշացավ, միայն թե այն իր հետ բերեց մի ճերմակ սպասում, որն արդեն հարյուր տարի է՝ քնում է մահճակալիս սնարին, արթնանում՝ զարթուցիչիս զանգի հնչելուն պես, նախաճաշում ինձ հետ, քայլում, լռում ինձ հետ, թախծում... Այն հոգուս մշտական հյուրն է այսուհետ...



## ԼՈՒՍԱՄՈՒՏ ՉՈՐՐՈՐԳ

### Աղջիկը, ով արեվ քերեց...

Մանկությունից շատ բան չեմ հիշում, դրա համար մայրս ամեն օր մի բան էր պատմում՝ հեքիաթի պես, հեքիաթի փոխարեն, ես ես դա գծում-կառուցում էի մտքիս մեջ, հետո փոխանցում սրտիս: Մանկությանս հանգրվանը սիրտս է: Պատերազմից մթազնել են հիշողություններս: Գու՞ցե կմտածեք, որ դա լավ է, չէ որ եթե հիշեմ, ապա պիտի հիշեմ պայթյուններ, լաց ու կոծ, նկուղներում ծվարած մայրեր ու երեխաներ, արցունքն աչքերին սառած ծերեր եւ համատարած սպասող հայացքներ: Գուցե՞ս, բայց չէ՞ որ այդ ամենն իմն է, ես եմ ապրել, դա իմ կյանքի պատմության մի մասնիկն է, որ կոչվում է մի վիատ բառով՝ մանկություն: Եթե չես հիշում մանկությունդ, ուրեմն՝ կիսատ ես ապրել կյանքդ... Ինչ-որ մեկը գողացավ իմ եւ ինձ նմանների մանկությունը, եւ ես ու ինձ նմանները ստիպված եղանք շուտ մեծանալ...

Հուշերս արթնանում են պատերազմից հետո միայն, ասես՝ լոկ պատերազմից հետո եմ ապրել մանկությունս: Պատերազմից հետո ամենապայծառ բանը, որ հիշում եմ, Նրա դեմքն է՝ լուսավոր, ինչպես Աստվածամայրը: Այո, նա հենց այդպիսինն է՝ մաքուր ու լի բարությանը:

Այսօրվա պես հիշում եմ՝ 1995 թվականի ամառն էր, երբ Նա եկավ: Հագին երկար զգեստ էր, դեմքին՝ արեւ: Հագիվ 25-26 տարեկան էր, մի քիչ թմբիկ արտաքինով: Եկել էր որպես կամավոր՝ դպրոցում անգլերեն դասավանդելու եւ գյուղի երեխաներին ազգային երգ ու պար, ազգային ավանդույթներ սովորեցնելու: Հայրիկիս մասին լսած լինելով՝ նա որոշել էր, որ հենց մեր տանն է մնալու:

- Անունս Ծիա է, Ծիա Վարդապետյան, ես Ամերիկայից եմ եկել, այսուհետ ձեր տանն եմ մնալու, կընդունե՞ս ինձ, փոքրիկ աղջիկ:

- Մա՛մ, Ամերիկան ի՞նչ է,- հարցրի կամաց:

- Լավ տեղ չէ,- Ծիան պատասխանեց մայրիկիս փոխարեն,- ամենալավ տեղն այստեղ է:

Ես ամոթխած թաքնվեցի մայրիկիս փեշի տակ: Նա ծիծաղեց: Ես սկսեցի մայրիկիս փեշի տակից գննել նրան: Նրա երկար, հասարակ, մուգ կապույտ զգեստը գրավեց ուշադրությունս: Մի պահ հիշեցի մորս շորերը, նիհար կազմվածքը: «Ուզում եմ, որ այդ շորից մայրիկիս էլ լինի», - անցավ մտքովս, ու սկսեցի նայել նրա պայուսակին, սեւ, հարդար-



ված մազերին, թեթև շրթներկին: «Ինչու՞ մայրիկս այդպիսի զգեստ չունի, ինչու՞ շրթներկ չի քսում...»,- մտածում էի, երբ նա նորից խոսեց.

- Ես հեռու տեղից եմ եկել,- ասաց ու պայուսակից մի քանի տուփ կոնֆետներ հանեց,- քեզ համար է, վերցրու:

- Մա՛մ, սա ի՞նչ է,- կամաց հարցրի մայրիկին:

Մորս դեմքին ցավոտ ժպիտ երեսաց: Բայց նա տուրք չտվեց ցավին:

- Քաղցրավենիք է, վերցրու եւ շնորհակալություն ասա օրիորդ Ծիային:

Ես երկար նայեցի նրա պարզած ձեռքին ու մնացի իմ տեղում. «Մայրիկս իսկական կոնֆետներ է պատրաստում փայլաթղթի մեջ, ես այդպիսինը չեմ ուզում, դրանք իսկական չեն»:

Ծիայի աչքերից մի քանի արցունք կաթեց, նա ներողություն խնդրեց ու սրբեց աչքերը: Ես զարմացա ու մտածեցի, որ երեւի նեղացավ ինձնից: Հետո նա կոնֆետները դրեց սեղանին եւ վարորդին պատվիրեց, որ ներս բերի ճամպրուկները:

Այսպես Ծիան միառժամանակ հայտնվեց մեր ընտանիքում ...

Մի օր նա հավաքեց բակի բոլոր երեխաներին եւ կոնֆետներ ու խաղալիքներ բաժանեց: Բոլորս հիացած էինք ոչ այնքան անձանոք քաղցրավենիքով, որքան նրանց գույներով: Հետո Ծիան բացեց խաղալիքների տոպրակը, բաժանեց մեզ: Հանկարծ մեկը գոչեց. «Ես խաղալիք ավտոմատ եմ ուզու՞մ, հաջորդ անգամ ինձ կբերե՞ս դրանից»:

- Ի՞նչ ես անում խաղալիք ավտոմատը,- հարցրեց Ծիան:

- Ո՞նց թե ի՞նչ ես անում, բա առանց ավտոմատ ի՞նչ խաղ:

- Իսկ ի՞նչ խաղ ես խաղում ավտոմատով:

- Մարդ եմ սպանում, թուրքեր եմ սպանում, շա՛տ թուրքեր, դու գիտե՞ս թուրքն ինչ է: Թուրքը շատ վատ բան է, նրան պետք է սպանել, թե չէ ինքը կգա ու մեզ կսպանի: Այ, տե՛ս, Գավիթի պապային թուրքն է սպանել, Կարենի հոպարին էլ է թուրքը սպանել, մեր հարեւան Մարգո տատին ամեն օր լացում է ու ասում՝ թաղեմ թուրքին, որ իմ բալան տարավ ինձնից...Թուրքը վա՛տ բան է...

Ծիան ոչինչ չպատասխանեց, դեմքով շրջվեց դեպի բակի ընկուզենին ու աչքերն առավ ձեռքերի մեջ: Հետո խաչակնքեց մի քանի անգամ...

- Դու պետք է ուրիշ խաղալիքներով խաղաս, այ սրանցով, տղա՛ս, սրանք լավ խաղալիքներ են, իսկ ավտոմատը լավ խաղալիք չէ, դու միայն լավ խաղալիքներով խաղա ու վատ մարդկանց մասին մի մտա-

ծիր... Կուզե՞ս՝ ես քեզ «Արջուկի ու պաղպաղակի» հեքիաթը պատմեմ:  
Շատ դուրդ կգա:

- Իսկ պաղպաղակն ի՞նչ է:

- Պաղ-պաղ...պաղպաղակը...վաղը մենք միասին պաղպաղակ կպատրաստենք, կուզե՞ք:

-Հա՛...հա՛...հա՛, ուզո՞ւմ եմք,- հնչեց ամեն կողմից:

Հաջորդ օրը մեկը կաթ բերեց իրենց տնից, մյուսը՝ շաքար, մեկը՝ միրգ, եւ փոքրիկ բաժակների մեջ պաղպաղակ պատրաստեցինք: Այդ հարցում բոլորիս օգնեց մայրս: Մի քանի ժամից պաղպաղակ կերանք...Պա՛ղ-պա՛ղ-ղա՛կ...Ի՛նչ համով բան է...

Ծիան լուսանկարչական ապարատ էր բերել եւ լուսանկարում էր: Մենք էլ պարտադիր ժպտում էինք: «Չի՛զգգ», - ասում էր Ծիան: Մենք էլ հետեւից կրկնում էինք՝ չիի՛զգգ...Ամեն ինչ նորություն էր...

Ծիան մեկ տարի մնաց մեր տանը: Ուներ իր առանձին սենյակը, իր սիրելի անկյունը, բակում իր սիրած տեղը: Դպրոցում անգլերեն էր դասավանդում: Անգլերենը խորթ էր բոլորին: Ուսուցիչներն էլ էին մասնակցում դասերին: Ծիան իր աշխատավարձը չէր ստանում, տրամադրում էր դպրոցի կարիքները հոգալուն:

Մի օր՝ Չատիկի տոնին, նա հարցրեց.

- Իսկ դուք Չատիկը ո՞նց եք նշում:

- Իսկ Չատիկն ի՞նչ է,- հարցրինք...

Նրա հետ առաջին անգամ Չատիկ նշեցինք, ձու ներկեցինք, գատկական խաղեր խաղացինք:

- Ինչ լավ բան է այս Չատիկը,- ասաց մեր բակի Լիլիթը,- ափսոս, որ շուտ չենք իմացել, թե չէ ինչքա՞ն ձու կներկեցինք....

Ես երբեք չեմ մոռանա Ծիայի ժպիտը, նրա ժպիտում այնքան քախիծ կար. հիմա եմ հասկանում նրա հոգու խռովքը: Նա իր կամքով հայտնվել էր մի տեղ, որտեղ իրար էին խառնվել վիրավոր ճակատագրերը, մանուկների՝ այդպես էլ չմանկացած մանկությունները, պատերազմի վերքերը: Այդ ամենի մեջ Ծիան ե՛ր հարազատ քույր էր, ե՛ր ընկերուհի, ե՛ր խորհրդատու, ե՛ր հոգեբան, ե՛ր ուսուցիչ...Ծիան մեր գյուղի արեւն էր...

Ծիան վայրի վարդեր շատ էր սիրում: Երբ դպրոցից տուն էր գալիս, վայրի վարդերի մեծ փնջի տակից դեմքի կեսը չէր երեւում: Ամեն մեկն ուզում էր ինքն անտառից Ծիայի սիրած ծաղիկները բերել: Հաճախ երեխաները վիճում էին, թե ով է առաջինը նրան ծաղիկ նվիրելու: Հետո

հերթ էին դնում՝ այսօր ես, վաղը՝ դու, հաջորդ օրը՝ մեկ ուրիշը: Անտառի բոլոր վայրի վարդերը նրանն էին...Շատ հաճախ նա ուրախությունից լաց էր լինում: Բոլորը վագում ու գրկում էին նրան... «Այդքան երիտասարդ տարիքում ես կարողացա ամենաերջանիկ մարդը դառնալ», - ասում էր Ծիան:

Մեկ տարի անց եկավ հրաժեշտի պահը: Ծիան պիտի մեկներ Ամերիկա, ընտանիքը սպասում էր: Նա ճամպրուկները ձեռքին շվարած կանգնել էր, արցունքները հոսում էին: Գյուղացիներից ամեն մեկը մի բան էր բերել նրա համար՝ դոշաբ, մուրաբա, չիր-չամիչ, անգամ ձու եւ կաթնամթերք...

Ծիան հազար ու մի թելով կապվեց մեր գյուղին, մենք էլ՝ նրան: Գա է պատճառը, որ նա ամեն տարի ամռանն այցելում է, թեկուզ մեկ-երկու օրով:

Ծիան հայրենիքից իր հետ նռան շիվեր տարավ. «Ամերիկայում կտնկեն, փոքրիկ հողամաս ունենք»:

Մի օր պապս հարցրեց նրան.

- Հը՞, նռնենին ծաղկե՞ց, բե՞րք տվեց ...

- Ո՛չ, պապի, թեպետ չչորացավ, բայց չծաղկեց...

- Ամեն ծառ իր հայրենիքն ունի, աղջի՛կս... Ամեն ծառ իր հայրենիքում է ծաղկում...



## Խեղճ մեխակներ

Մեխակների կարմիրը թախիծով պարուրեց: Արդեն ո՞րերորդ անգամ էի գնում նույն մեխակները, ո՞րերորդ անգամ էր ծաղկավաճառը սեւ երիզով կապում ծաղիկներն ու տալուց առաջ ստուգում՝ զու՞յգ է տվել արդյոք, թե՞ չէ:

Ո՞րերորդ անգամ է՝ չէի հասկանում՝ ծաղիկներն են դողում, թե՞ ձեռքերս:

Ճանապարհին առաջին անգամ խորհեցի մեխակների մասին. խեղճ մեխակներ, հիմա ո՞վ է իր սիրելիին մեխակներ նվիրում, մեխակների «գարն» անցել է, հիմա ճոխ ծաղկեփնջեր են նվիրում, իսկ մեխակները... մեխակները տխուր վախճան են ունենում: Երկար ժամանակ է՝ նրանց սպիտակով չեն կապում: Ո՞վ փոխեց նրանց ճակատագիրը, ո՞վ իրավունք ուներ...

Շիրմաքարից ինձ նայող հարազատ անուն-ազգանունն ասես լռության մեջ շշուշուց՝ բարեւ: Բարեւ՝ ասացի ինքս ինձ, եւ քամին առավ բարեւս ու տարավ. տարավ, համբույրի պես տվեց շիրմաքարին: Հետո նորից իջավ լռություն, ավելի ճիշտ, այն կախվեց մերթ ձեռքիս մեխակներից, մերթ շիրմաքարից: Նրանք երկուսն էլ տխուր էին՝ թե՛ ծաղիկները, թե՛ սառն ու անշունչ քարը, բայց ծաղիկները դեռ կենդանի էին, նրանք երեւի ուզում էին դեռ ապրել սիրահարի ձեռքերում կամ էլ ծննդյան նվեր դառնալ...

Մեխակները գրկեցին սառը քարը. դա միակ տեղն էր, ուր նրանց սպասում էին...

«Քեզ համար նորից մեխակներ եմ բերել... Երեկ ընկերներդ էին եկել, 25 տարի է՝ խմում են քո անմահության կենացը, բայց դրանից սպասումս ավելի է ծաղկում, երիտասարդանում... Ամենալավ բանը տեղ հասավ, բայց դու նրա հետ չեկար», - կարոտը խաղաց շուրթերիս, եւ ես զգացի նրա կիսադառը համը:

Կարոտս երկար մնաց շուրթերիս, ապա նա էլ քարացավ, խառնվեց լռությանը, մեխակներին: Կարոտս խելագարվում էր անզորությունից, պետք էր դեպի անցյալ գնալ, մի քանի հուշ փորփրել՝ հանգստություն գտնելու համար: Եւ կարոտս տարավ դեպի մանկություն, որ երազ էր, կար ու չկար: Հստակ չհիշեցի, թե քանի տարեկան էի, երբ մորս ձեռքին

առաջին անգամ գույգ մեխակներ տեսա, աչքերում՝ անորոշ մի բան. միայն հետո հասկացա, որ այդ անորոշ մի բանը ցավն էր՝ կորստի ցավը: Իմ հարցին, թե ո՞ւմ համար են մեխակները, մայրս շշմոջաց.

- Հայրիկիդ համար են:
- Մենք նրա մոտ ենք գնու՞մ:
- Այո:
- Իսկ ինչու՞ նա մեզ մոտ չի գալիս:
- Մի օր կգա, դու միայն չմոռանաս նրան սպասել:
- Իսկ նա ե՞րբ կգա:
- Երբ մեծանաս, մե՛ծ, սիրուն աղջիկ դառնաս, այդ ժամանակ կգա:
- Նա ինձ ծաղիկներ կբերի՞:
- Այո, շատ ծաղիկներ:
- Մեխակնե՞ր:
- Չէ, ավելի գեղեցիկ ծաղիկներ:
- Իսկ մեխակները գեղեցի՞կ չեն:
- Իհարկե, գեղեցիկ են: Աշխարհի բոլոր ծաղիկները, ինչպես աշխարհի բոլոր մանուկները, գեղեցիկ են...

Ես չէի ուզում թարթել աչքերս, որպեսզի երագս ցած չգլորվի, ես դեռ ուզում էի երկար մնալ մանկության հետ, բայց ինչ-որ մեկը դատարկել էր մանկությանս ներկայանակը եւ ընդամենը մեկ գույն էր թողել այնտեղ, եւ այդ գույնը շատ էր նման շիրմաքարին խոնարհված մեխակների գույնին. դա պատերազմի գույնն էր:

...Մեխակները լուռ ու խոնարհ գրկել էին շիրմաքարը, եւ թվում էր՝ նրանք էլ արտասովում էին ցավից կամ էլ, ո՞վ գիտե, գո՞ւցե իրենց դառը ճակատագիրն էին ողբում...



## ԼՈՒՍԱՄՈՒՏ ՎԵՑԵՐՈՐԴ

### Ինչ-որ մի տեղ դեռ ապրում են երազները...

**Ռ**արպասը ճռռաց: Այդ ճռռոցն այնքան հարազատ էր, որ թվաց՝ականջիս տակ մեկը նվագեց ու փախավ: Թե ուր փախավ կամ ինչու, Աստված գիտեր...

Ամեն բան ամայացել էր. տան փոխարեն դեղնած խոտեր էին, որոնցից առա աշնան թաց բույրը, այդ բույրը տխրություն էր տարածում: Տխրությունն ամենուր էր. խոտերին, քարերին, մերկ տանձենու ճյուղերին, անգամ ժանգոտած ճոճարանին, որին ամուր փարվել էր մանկությանս դառը-ուրախ օրերի ուրվականը: Հիշեցի, որ այդ ճոճարանին նկար ունեն ընկերուհուս հետ՝ փոքրիկ դեմքին քաղցր ժպիտ: Այդ ժպիտը մի պահ թեւեր տվեց, տարավ դեպի հուշերիս հեռավոր եզերքները, որտեղ ազատ էր երազներիս ճախրանքը...

Մտովի նորից կառուցեցի հայրական տունս, սկզբում դրեցի քարերը, ապա եւ մնացած ամեն - ամեն բան. կարծես՝ ես էլ շատ տարիներ առաջ մասնակցել էի տան շինարարությանը: Հետո մտա տուն, մատեցի տաք վառարանի կողքին ու սկսեցի լսել տատիս հեքիաթը: Ապա տատս իր գույնզգույն ծաղիկներով գոգնոցի մեծ գրպանից խնձորի չիր հանեց, տվեց ինձ: Մայրս կողքից ասաց. «Դիր պայուսակիդ մեջ, դասամիջոցին կուտես, ընկերներիդ էլ կտաս»: Ես նայեցի նրա ափերին. նրա ափերը.. Այդ ափերը կյանքիս մեծագույն հարստությունն են... Ես աշխարհը ճանաչեցի մորս ափերի մեջ, եւ ինձ թվում էր, թե «աշխարհ» կոչվածը ինչ-որ տաք, շատ տաք մի տեղ է, ուր արեւը երբեք չի կորչում, իսկ գիշերը թաքնվում է աստղերի հետեւում, որպեսզի աստղերը ողջ գիշեր տաքացնեն աշխարհը:

Մորս ափերի մեջ աշխարհն այնքան բարի էր, որ ամեն օր հանդիպում էի այնտեղ ապրող հեքիաթների հերոսներին, ամեն օր բարեւում էի, գրուցում նրանց հետ եւ երբեք մտքովս չէր անցնում, որ նրանք կարող են իրական չլինել...

Մորս ափերի մեջ ես սիրեցի բարին ու մեծացա բարու հավատով...

Մի օր մորս տեսա տան փոքրիկ հողամասում աշխատելիս. նրա ափերը կոշտացել էին հողի հետ շփումից: Հետո փոքրիկ հողամասը շատ ու շատ բարիքներ տվեց, քաղցր ու հյութալի պտուղներ, եւ ես հասկացա աշխատանքից կոշտացած ձեռքերի ուժը: Ձեռքերն էին կոշ-



տացել, ոչ թե այն աշխարհը, որ պահում էին իրենց մեջ:

Մորս ավերի մեջ ես տեղավորում էի իմ փոքրիկ մատները, երբ նա ձեռքիցս բռնած դպրոց էր շտապում, իսկ դրսում ցուրտ էր, ձմեռ էր: Մատներս թաքնվում էին նրա ավերում, չէ՞ որ այնտեղ միշտ տաք էր: Նույն օրը, դպրոցից տուն գալուն պես, ես տեսա, թե ինչպես է երկար թելը գալարվում մորս ավերում, ասես՝ պար բռնում մատների հետ, հետո նորից ցած իջնում, նորից բարձրանում ճկուն շարժումներով: Այդ շարժումները ստեղծեցին այն փափուկ ձեռնոցները, որ հաջորդ օրը պիտի կրեի դպրոց գնալիս:

Մայրս երբեք սպիտակ շոր չէր հագնում: Երբ հարցնում էի, թե ինչու՞, նա պատասխանում էր՝ ինձ չի սագում սպիտակը:

- Իսկ այն գեղեցիկ վերնաշապիկը, որ քեզ են նվիրել ծննդյանդ օրը, այն բաց դեղին է, սպիտակ չէ, ինչու՞ չես հագնում:

- Իմ հագով չէ, դրա համար:

- Բայց դու այն չես փորձել...

- Փորձել եմ, երբ դու քնած էիր:

Ես նրան հաճախ էի պատկերացնում սպիտակ կամ որեւէ բաց գույնի շորերով, հատկապես երկար ու նուրբ զգեստով, ու իմ երեսակայության մեջ նա այնքան գեղեցիկ էր այդ շորերով: Ահա նա բաց կապույտ զգեստով է, ահա երկար շորի փեշը առավ ավի մեջ: Այդպես կարծես այն նկարի աղջիկ լինի, որ չգիտեմ ով է նկարել ու չգիտեմ, թե ծանոթներիցս ում տան պատին եմ տեսել:

Հետո, շատ հետո, երբ հետո-ն դարձավ ամիս, դարձավ տարի ու տարիներ, աշխարհը մեծացավ, թվաց անծայրածիր, այլևս չտեղավորվեց մորս ավերի մեջ, այն վարարուն գետի պես դուրս հորդաց եւ ափ հանեց հատակի գաղտնիքները:

Մայրս լաց եղավ նավաբեկվածի պես, նա ուզում էր պահել աշխարհն իր ավերում, ուզում էր, որ ես ուրիշ ավեր չճանաչեմ, իսկ ես... Ես շվարած ծովագնացի պես ուզում էի հայտանգործել նոր աշխարհի գաղտնիքները: Նոր աշխարհում արելը ծագում էր առավոտյան, եւ հաճախ, երբ երկինքը ամպոտ էր լինում, արելի տեղ անձրեւ էր թափվում, երբեմն՝ ձյուն ու կարկուտ: Գիշերը աստղերը մե՛րթ երեւում, մե՛րթ կորչում էին խավարի մեջ, եւ ցուրտն ու տաքը, լավն ու վատը, երկարն ու կարճը, քաղցրն ու դառնը ու բոլոր-բոլոր հոմանիշ - հականիշները ապրում էին միասին, կողք կողքի... Դա արդեն ավեափ աշխարհն էր...

Ես հասկացա՝ նա, ով ինչ-որ բան է կորցնում, շատ թանկ ու գեղեցիկ մի բան, հաճախ հրաժարվում է բոլոր տեսակի շատ թանկ ու գեղեցիկ բաներից: Երեւի դրա համար էր մայրս միշտ մուգ գույնի շորեր հագնում, երեւի դրանում հեշտ էր ամփոփել հոգու վիշտը, իսկ սպիտակը... Ախր, սպիտակը մնացել է նույնը՝ իմ երեւակայության մեջ այն դարձյալ նրան շատ է սագում...

Ես հիշեցի մորս ավերը եւ ասես հասկացա՝ ամեն բան կյանքում պետք է պինդ, շատ պինդ պահել ավերի մեջ, պետք է պահել հնարավորինս երկար ու վայելել այն, քանզի մի օր այն հնարավոր է ցած ընկնի անվերադարձ...

Տան քանդված պատերին թառել էր լռությունը եւ չարաճճի թռչունի նման այս պատից այն պատն էր ցատկոտում՝ ասես թարմացնելու հիշողություններս:

Մտովի փնտրեցի ու գտա պատից կախված հայրիկիս լուսանկարը: Այդ լուսանկարի հայացքի ներքո էի մեծացել: Լուսանկարը երբեմն ժպտում էր, խորհուրդներ էր տալիս, երբեմն՝ սաստում ու նախատում:

Ամեն տարի հայրիկիս ծննդյան օրը հավաքվում էին մարտական ընկերները: Տատս ու մայրս կես տխուր, կես ուրախ ժպտով սեղան էին բացում: Հոգուս մեջ միշտ թարմ է այդ տեսարանը. տղերքը հերթով ներս են մտնում: Ահա Դավիթը, Անդրանիկը, Արազը, Մխիթարը, Ժորիկը, Գոգոն եւ մյուսները: Նաիրա տատին նայում է նրանց, ու սիրտը ցավից մղկտում է: Նրան թվում է՝ Արմենն էլ վերջում ներս մտավ, ու երբ տղերքը նստեցին սեղանի շուրջ, նորից անհետացավ տեսիլքի պես: Արդեն ո՞րերորդ անգամ էր՝ որդու ծննդյան օրը գալիս էին ընկերները, եւ ո՞րերորդ անգամ նրան թվում էր՝ Արմենն էլ նրանց հետ է:

Ահա տատս թեքվում է դեպի խոհանոց, սրբում արցունքները, ապա խաչակնքում՝ Աստված պահի ձեր բալեքը:

Ամեն բան նույնն է, ինչպես ամեն տարի: Դարձյալ բարձրացվում է հայրիկի հիշատակին ձոնված կենաց-բաժակը, ապա մի առ մի հիշվում են ընկած աշանցիների անունները:

- Փա՛ռք տղերքին, - ասում են եւ խմում հոտնկայս...

Նաիրա տատին փորձում է հարսից թաքցնել արցունքները, բայց հարսն ինքը հազիվ կարողանում է զսպել հոգու փոճկոցը: Արդեն հազարերորդ անգամ նրանք փորձում են միմյանցից թաքցնել իրենց հոգիների խռովքը, եւ արդեն հազարերորդ անգամ նրանց հայացքները գտնում են իրար, կարդում միմյանց աչքերը: Աչքերի փոխարեն ցավ է: Այն

մխում է կրակի պես, իսկ կրակը չես թաքցնի:

- Մարինե՛, տղման բեր,- տատս դառնում է դեպի մայրս եւ նույն պահին կանգ է առնում քարացած. հարազատ մի ձայն թափանցում է ուղեղը. «Մամ, քո տղման ուրիշ է, ուրիշ»: «Արմենիս ձայնն է, որ ամեն անգամ տղմա պատրաստելիս հնչում է,- ասում է ինքն իրեն,- Արմենս շատ էր սիրում իմ պատրաստած տղման: Հիմա ձեզ հալալ լինի, դուք էլ եք իմ որդիքը»,- ասում է բարձրաձայն ու փորձում ժպտալ: Մի տկար ժպիտ հայտնվում ու վայրկյանաբար անհետանում է շուրթերին:

- Ես իմ կյանքով Արմենին եմ պարտական,- լռությունը խախտում է Գոգոն,- ամեն անգամ ասել եմ ու չեմ դադարի ասել: Թուրքին գերի լինելն ավելի վատ է, քան մահը: Թուրքն Աստված չունի: Նա ծնվել է որպես վայրագ գազան՝ մարդկային տխեղձ կերպարանքով: Սարսափելի է թուրք տեսակի գազանը: Արմենն ինձ ազատեց նրանց ճիրաններից, երբ ինձ թվում էր՝ էլ արեւի երես չեմ տեսնի: Արմենն ինձ շնորհեց այդ արեւը, նա ինքը արեւ էր, արեւից ավելի պայծառ ու այդպես էլ մնաց իմ սրտում...

Ես փոքր էի այդ ժամանակ, բառերի իմաստը դժվար հասկանալի, բայց հիշեցի դրանք ու երբ մեծացա, հասկացա շատ ավելին:

Հիշեցի տղերքի աչքերի անսովոր փայլը: Ոմանք չէին կարողանում թաքցնել արցունքները...

Ամեն տարի մի նոր բան հասկացա, մի նոր բան բացահայտեցի:

Հիշեցի մորս արցունքները, երբ ես՝ տաս տարին չբոլորած աղջնակս, պահարանի փոշին սրբելիս գտա հորս՝ հետմահու տրված շքանշանը:

- Մամ, սա ի՞նչ շքանշան է,- հարցրի:

- Հայրիկինն է: «Մարտական խաչ երկրորդ աստիճանի»:

- Իսկ առաջին աստիճանի է՞լ է լինում:

-Այո,- մայրս խորհրդավոր ժպտաց ու շոյեց վարսերս:

-Իսկ ինչո՞ւ հայրիկինը առաջին չէ, մի՞թե նա քիչ է կռվել:

-Ոչ, աղջիկս,- մորս ձայնը դողաց,- նա կռվել է այնքան ու այնպես, ինչպես վայել է արցախցուն: Նրան ու նրա մմաններին շքանշանով չես գնահատի: Եվ, ընդհանրապես, շքանշանով կարող եմ պարզեատրել մարդուն, բայց ոչ նրա գործը: Իսկական հերոսությունը շքանշանի կարիք չունի: Հերոսությունը շատ բարձր գործ է:

-Ուրեմն՝ ավելի լավ է ոչինչ չտալին,- ասացի՝ ուղիղ նայելով մորս աչքերին:

Մի քանի թույլ լուծում էր, հետո մայրս նորից ժպտաց սառած արցունքների միջից, գրկեց, համբուրեց ճակատս:

Ո՞րերորդ անգամ մայրս կուլ էր տալիս արցունքները, եւ արցունքների հետ նորից ու նորից կուլ էր գնում ցավի մրմուռը:

- Վազիր աղբյուրից ջուր բերելու, ուր որ է պապդ կգա հանդից,- ասաց քիչ անց:

Ժպտացի ի պատասխան, թեեւ սրտումս մի տխուր ամպ թառեց ու այդպես էլ մնաց...

...Օդում թռչունների երան հայտնվեց, որ դանդաղ ու կանոնավոր չվում էր դեպի հարավ: Հայտնվեց ու քիչ անց անհետացավ:

Չոքեցի եւ սկսեցի պոկոտել կիսաչոր խոտերը, ասկա դրանցից փունջ պատրաստեցի: Թվում էր՝ մեկիկ-մեկիկ փնջում էի մանկության կիսատ-ծվատ հուշերը: Խոտերի փունջը սեղմեցի կրծքիս եւ այդպես մնացի: Կուրծքս ջերմացավ: Այդ ջերմությունն ասես բուժում էր հոգուս տխրությունը:

Քիչ հեռու տանձենին էր՝ իմ մանկության տանձենին, որ հիմա տան ամայության մեջ նմանվել էր աղոթող հավատացյալի՝ տխրամած դեմքը հառած երկնքին: Երկար նայեցի տանձենուն: Այն ամեն տարի այնքան առատ տանձ էր պարգևում, որ բոլոր հեռու-մոտիկ բարեկամներին բաժին էր հասնում: Մի քանի տարի էր՝ տանձենին բերք չէր տալիս, խռովել էր ասես: «Խեղճ տանձենի», - մտածեցի ու հիշեցի, թե ինչպես ծառի հաստ ճյուղերից պապս ճլորթի էր գցում, եւ դպրոցից տուն գալուն պես թաղի երեխաներով հարձակվում էինք ճոճվելու՝ մեկը մյուսին հերթ չտալով:

Պապս աստում էր.

- Բա ընկերությունը էդպիսի՞ բան է: Համերա՛շխ եղեք:

Նույն տանձենու տակ տատս ժենգյալով հաց էր թխում: Օդը լցվում էր ժենգյալի անուշ բույրով եւ գրգռում փողոցով անցնողի ախորժակը: Մեկ էլ տեսար՝ ցանկապատի հետեւից մեկը ձեն էր տալիս.

- Նաիրա՛, մեկը կարելի՞ է համտեսել:

- Իհարկե՛, իհարկե՛, մեկի փոխարեն երկուսը, որքան ուզես:

Ու ամեն անցորդ համտեսում էր տատիս ժենգյալով հացն ու օրհնում:

- Տա՛տ, էսքան ժենգյալն ինչու՞ են իրար խառնում,- հարցնում էի անտեղյակ:

- Որպեսզի համեղ լինի...

Հետո ավելացնում էր քթի տակ.

- Մարդ արարածն էլ էդպիսինն է՝ ժենգյալի մման, մենակ մարդը համ ու հոտ չունի, մարդս պիտի շրջապատ ու ընկերներ ունենա: Մենակությունն ամենամեծ անհամությունն է:

Պատկերներից սթափվել չէր ստացվում, պատրանքի պես շրջապատել էին աչքերս: Ձեռքս առա նոթատետրս եւ թղթին հանձնեցի պատրանքներս... Հետո իջավ հանգստություն, որը տիրում է միայն այն հոգիներում, ովքեր չարացած չեն մարդկանց ու աշխարհի հանդեպ եւ ընդունակ են աշխարհում կատարվող շեղ ու նենգ գործերը թողնելու Երկնայինի դատին...

Տան ամայության մեջ կարոտի բույր կար, եւ անհագորեն շնչում էի այդ բույրը: Քամին մեկ-մեկ պոկոտում էր աշման տերեւները, ապա հոգատար մոր պես շոյում էր հոգնած գլուխս, որ դեմ էի տվել տանձեմուն... Մեկը հեքիաթ էր սվսվում. ինձ թվաց՝ տատիս ձայնն է. ահա նա անցավ կողքովս՝ գույնզգույն գոգնոցը կապած: Ես ուզեցի բռնել նրա գոգնոցի փեշից, բայց նա նույն վայրկյանին անհետացավ: Տատիս գոգնոցի մեծ գրպանում թաքնվել էր մանկությունս...



Այն Հայաստանի կենացը, որ դեռ պիտի գա

Անդր հոպարը (Անդրանիկ Մուրադյան, Արցախյան պատերազմի առաջամարտիկ, Շուշիի առանձնակի գումարտակի անդամ) բաժակները լցնում է կոնյակով:

- Կխմե՞ս, հոպարի աղջիկ:

Ժպտում է:

- Կփորձեմ, եթե լավ կոնյակ է:

Ժպտում եմ:

- Մալադե՛ց, թե չէ չեմ կարողանա հիշողությունս փորփրել: Գիտես՝ հոպարը խոսողներից չէ:

Նրա ժպիտը խորհրդավոր երանգ է ստանում: Բարձրացնում է բաժակը, խոսում կանգնած.

- Պատերազմի տարիներն ինձ համար ամենաերջանիկ տարիներն էին, ամենամաքուր ու ազնիվ տարիները, քանզի այն ժամանակ դու հստակ գիտեիր, որ քո ընկերոջ հետ կարող ես մարտի գնալ ու նահատակվել, քո ընկերը քեզ չի լքի մարտադաշտում, նա քո թիկունքին կանգնած է, դու էլ՝ նրա: Հիմա ժամանակները փոխվել են, շատերն են անճանաչելիորեն փոխվել, քչերն են իրենց դեմքը պահպանել, սակայն հենց այդ քչերն են, որ չեն ծախել իրենց հոգիները: Նրանք երբեք չեն լքի հայրենիքը ու երբեք հայրենիքում պարտվողի կարգավիճակով չեն ապրի, կատեղծեն, կարարեն, իրենց գործը կթողնեն սերունդներին: Սա է նրանց համար կյանքի օրենքը:

Մի պահ լռում է, աչքերում կայծեր են ծնվում, որոնք նա փորձում է թաքցնել: Կայծերը մե՛րթ երեսում, մե՛րթ կուլ են գնում: Հոպար Անդրն հուզվել չի սիրում:

- Իմ հիշողություննե՛րը... Դրանք ինձանից ոչ ոք չի կարող խլել, թալանել: Ամեն Աստծո օրս ապրում եմ այդ հիշողություններով, եւ բացակա ընկերներս ոչ մի պահ չեն լքում ինձ: Նրանք իմ լավագույն խորհրդատուներն են, եթե ես մի շեղ քայլ անեմ, նրանք ինձ չեն ների, նրանք կնայեն աչքերիս ու կասեն. «Քեզ չսազեց, Անդր՝, շիտակ ապրիր»:

Նրանց մասին ես պատմել եմ զավակներիս, որպեսզի նրանք էլ իրենց զավակներին պատմեն, որպեսզի մաքուր ապրեն եւ գլխաբաց քայլեն: Փա՛նք տղերքին եւ երանի այն ապրողներին, ովքեր հայրենի-

քով են ապրում:

Անդո հոպարը խմում է կանգնած: Ես էլ իբր հետետում եմ նրա օրինակին:

Քիչ անց գրույցին միանում է հոպար Ներսիկը (Ներսես Գավթյան):

- Ներսիկ, կխոսե՞ս պատերազմից, աղջիկս ուզում է գրել մեր մասին:

Մի հետաքրքիր բան պատմիր:

- Ես հիշողության կորուստ ունեմ, Անդո, մի՞թե չգիտես,- ծիծաղում է Ներսիկը,- ոչինչ չեմ հիշում, ես նյութի համար հաջող հերոս չեմ:

-Լավ, լավ, այսօր դատապարտված ենք խոսելու, Ներսիկ, Հերմիենեն երկար ճանապարհ է անցել մեզ հանդիպելու համար:

Նրանք նայում են իրար: Հասկանում են միմյանց: Երբեմն լռությունը խոսում է դառնում, երբ հարազատ են մարդկային հոգիները, հազար ու մի թելով իրար կապկպված:

-Է՛հ, տարիներ, տարիներ... Զսանից ավելի տարիներ են անցել, բայց տղերքի դեմքերը հիշողությանս մեջ միշտ վառ են, նրանցից ամեն մեկը պատմություն է՝ Բեկոր, Կարոտ, Պետո, Վիզեն, Արմեն...

Ներսիկը վառում է ծխախոտը, եւ տխրության թանձր ամպը ծածկում է նրա բարի աչքերը: Նա երկար ծխում է, եւ ես չեմ համարձակվում խախտել նրա լռությունը:

- Թողեք ծխեմ համբերանքի չիբուխս, չիբուխս կխոսեցնի:

- Ծխի՛ր, ծխի՛ր... Մենք էլ մի բաժակ կխմենք:

- Հիշո՞ւմ ես Աշանի համերգը, Անդո, հիշո՞ւմ ես՝ ոնց էիր տղերքի հետ երգում, «աստղ» էիր դարձել,- ծխի միջից երեսում է Ներսիկի նիհար դեմքը:

Հանկարծ քահ-քահ ծիծաղում են: Անդո հոպարն ասում է. «Դա գլուխգործոց էր, համերգ՝ պատերազմի տխուր օրերին: Երնե՛կ այդ օրերին»:

Անդո հոպարը խոսում է դանդաղ եւ համաչափ. «1992-ի ապրիլն էր, երբ Թալինի մեր ջոկատը հասավ Աշան՝ Արցախի այդ գողտրիկ գյուղը, մեզ հետ էին Բաղրամյանից մի քանի հոգի, նաեւ բեյրութահայեր Վիզենը, երկու Գոքորները եւ Սաքոն: Երեսունից ավելի հոգի էինք: Հայրդ՝ Արմենը, Բեկոր-Աշոտին խնդրել էր, որ մի քանի շաբաթով տեղավորվենք Աշանում, մնանք գյուղացիների տներում, համ էլ զինավարժություններ անցկացնենք հին Աշանի տարածքում: Աշանի օրերը լեզենդար օրեր էին: Ընդամենը երեք շաբաթ մնացինք այդ գյուղում, բայց դրանք դարձան պատմություն:



Երբ «ուրալը» հասավ Աշան, աննկարագրելի էր այն ջերմությունն ու սերը, որով գյուղացիները դիմավորեցին մեզ, գրկում էին, համբուրում, սեղմում կրծքներին, օրհնում, թվում էր՝ բոլորս այդ գյուղից էինք: Գյուղի մայրերի աչքերում մեր մայրերին գտանք, առաջին իսկ օրից անբացատրելի հարազատությամբ կապվեցինք Աշանին, նրա քար ու քղին: Կանայք ամեն օր ճաշ էին պատրաստում մեզ համար եւ հաճախ էլ՝ թաքուն-թաքուն սրբում արցունքները: Մենք նկատում էինք, բայց ցույց չէինք տալիս. պատերազմ էր, արցունքը դարձել էր սովորական բան, բոլորի աչքերում նույն ցավն էր, բայց մի հույսի շող կար, որ մարդկանց աչքերում տեսնում էինք:

Մի գիշեր չկարողացա հանգիստ գտնել, ասացի.

-Արմեն, մի բան եմ մտածել, պիտի իրականացնեմ տղերքի հետ: Որոշել եմ գյուղում համերգ կազմակերպել, մեզանից շատերն արմատներով սասունցի են, երգել, պարել գիտեն: Էս գյուղը զոնե մեկ օրով պիտի հանենք սթրեսից:

Արմենը խոսում ժպտաց(նա հաճախ էր այդպես ժպտում): Ես հասկացա, որ նա ընդունեց իմ առաջարկը: Առավոտ կանուխ տղաներին հայտնեցի որոշմանս մասին:

- Այ տղա, հո գիժ չե՞ս, ի՞նչ համերգ, մարդիկ կովում են, դու համե՞րգ ես տալիս,- ծաղրեց տարիքով ամենամեծը՝ բիճա Վարդգեսը:

- Չէ՛, մենք թալինցի ենք, արմատներով՝ սասունցի, բոլորս էլ երգել, պարել գիտենք: Աշանում թեկուզ մի օրով պիտի ուրախություն թնդա, թե չէ, ո՞վ գիտե, վաղը թշնամու գնդակը մեզնից ու՞մ կխնայի, ու՞մ կխլի:

Տղերքը ստիպված եղան համաձայնել յո՛ւր:

-Անդոն,- խոսեց հուպար Ներսիկը,- մի քանի օրում գյուղի դպրոցականներին էլ ներքաշեց գործի մեջ, սովորեցրեց ազգային երգն ու պարը: Դպրոցականները մեծ սիրով սովորում էին ու համերգի համար նույնիսկ սկսեցին աֆիշներ գրել, կախեցին գյուղի տարբեր մասերում: Համերգի անհավատալի լուրը հասավ հարեւան Բերդաշենն ու Նոր շեն գյուղերը:

Համերգ, ի՞նչ համերգ: Ոչ նստելու տեղ կար, ոչ էլ կանգնելու: Անդոն երգում ու երգում էր, երգը բալասանի պես թափանցում էր մարդկանց սրտերը, եւ մարդիկ զգում էին երգի բուժիչ ուժը: Ծափահարությունների տարափ էր, ցնծություն: «Նորի՛ց, նորի՛ց», գոչում էր բազմությունը: Անդոյի վրա հալ չկար, բայց շարունակում էր նույն երգերը տասն ան-

գամ երգել.

- Չայն տուր, ո՛վ ֆեդայ,
- Ինչու՞ ես տրտում,
- Լուռ ու մունջ նստած՝
- Երկար մտածում...

Դպրոցականները պարում էին, ձայնակցում:

- Երբեք չեմ մոռանա մանուկների, ծերերի, կանանց ու տղամարդկանց աչքերը: Այդ աչքերն ապրել էին ուզում ու հավատում էին դրան,- շարունակեց հուպար Անդոն: Համերգից հետո մի դպրոցական տղա մոտեցավ ու ականջիս փսփսաց. «Անդո քեռի, ես էլ եմ ուզում կռվել, ինձ զենք չե՞ք տա, շատ եմ ուզում»: Ես գրկեցի նրա փոքրիկ գլուխը, համբուրեցի.

-Չէ՛, տղա՛ս, պատերազմ գնում են միայն մեծերը, իսկ քո գործը լավ սովորելն է: Եթե լավ սովորես, կնշանակի՝ դու էլ կռվել ես:

- Բայց ինչպե՞ս:
- Այդպես՝ սովորելով:
- Իսկ պատերազմը ե՞րբ կվերջանա, քեռի՛:
- Շուտով, շատ շուտով, տղա՛ս,- ասացի:
- Այն ժամանակ է՞լ էսպիսի համերգ կանեք:
- Հա՛, այն ժամանակ ազգովի կերգենք, տղա՛ս:

« Աշանի օրերից հետո, Աշանից ստացած դրական լիցքերով լի՝ մեր ջոկատն օրեր անց մասնակցեց Շուշիի ազատագրմանը: Ազատագրված Շուշիով բացվեց հաղթանակի ճանապարհը, բայց, ցավոք, շատ ընկերներ այդ հաղթանակը չհասցրին տեսնել », - ասաց Ներսիկը:

- Այս բաժակն էլ խմենք, Ներսի՛կ, թող սա էլ լինի այն մեծ նպատակի կենացը, որ ապրում է: Ուզում եմ, որ դու էլ հավատաս այդ նպատակին, աղջի՛կս: Այն Հայաստանի կենացը, որ դեռ պիտի գա՝ Միացյալ Հայաստանի կենացը...



## ԼՈՒՍԱՄՈՒՏ ՈՒԹԵՐՈՐԴ

### Պատերազմը՝ քառակուսու մեջ

Հեռուստացույցը, որն ամբողջովին տարբերվում է իմ մանկության հեռուստացույցից, դարձյալ խոսում է նույն բանի մասին...

Պատերազմն այն ժամանակ միայն սեռ-սպիտակ էր, իսկ այսօր նոր երանգներ է ստացել...

Այն ժամանակ ես հավատում էի, որ հեռուստացույցը կախարդական խցիկ է, եւ որոշ մարդիկ կարողանում են այնտեղ մտնել ու դուրս գալ: Ես երագում էի՝ ինքս էլ մի օր մտնել այդ կախարդական խցիկ, հայտնվել լուրերի տաղավարում նստած սեռ-սպիտակ ծաղկավոր կիսաբաճկոնով աղջկա փոխարեն... Երբ «ծաղկավոր» աղջիկը խոսում, ավարտում էր, մեկ էլ տատս ասում էր՝ փա՛ռք Աստծո, գոհ չկա...

Հիմա ոչ ոք չի հավատում, անգամ մանկապարտեզի երեխան կծաղրի իմ միամտությունը, եթե իմանա, թե ես ինչ էի մտածում իր տարիքում: Մի՞թե քառակուսին կարող է կախարդական լինել...Ծիծաղելի է: Ես հիմա ոչ մի երկրաչափական պատկերի, ավելի ճիշտ, այդ պատկերը կրող առարկայի կախարդական լինելուն չեմ հավատում, որովհետեւ մեծ եմ: Հիմա ոչ մեկը չի հավատում, անգամ եթե փոքր է...

Ծաղկավոր կիսաբաճկոնով աղջկա փոխարեն այսօր տարբեր ալիքներով խոսում են տարբեր կիսաբաճկոններով կամ առանց դրանց, հարդարված մազերով, գրիմով աղջիկներ ու տղաներ, խոսում են տարբեր բաների մասին, աշխարհի տարբեր ծագերի մասին, բայց մի բան նույնն է: Տատս հերթով փոխում է ալիքները եւ... հերթով բոլորը նույն բանն են ասում՝ դարձյալ մեկ գոհ...Պատերազմը, փաստորեն, մնացել է քառակուսու մեջ...

Ես այլեւս չեմ ուզում հայտնվել հեռուստացույցում, առավել եւս, այնտեղից խոսող աղջկա փոխարեն լինել...Այնքան լավ կլիներ, եթե քառակուսին պատահաբար ջարդվեր, ու դրա հետ ջարդվեր նաեւ այն, ինչի մասին խոսում են բոլոր ալիքները...Բայց պատերազմը հարմարվել է քառակուսու մեջ մնալուն, նա ասես պահմտոցի է խաղում. երբեմն թաքնվում է այս կամ այն քաղաքական գործչի խոսքում, տողատակերում, երբեմն մտնում է կանանց ու ծերերի աչքերը, առանց խղճի զգացումի թաքնվում է նաեւ բակերում խաղացող մանուկների աչքերում եւ...Երբ նրան չեն գտնում, երբ նա հաղթում է, հայտարարում է.

- «Ստու՛կ», ես եմ, ես մեկ գոհ...

Քառակուսին հիշեցնում է նաեւ ամենատխուր ածականի մասին՝ անավա՛րտ... Գա դպրոցում սովորած ամենավատ ածականն է ինձ հա՛մար: Ես միշտ խուսափում էի դրանով նախադասություններ կազմելուց: Այդ բա՛ռը, որ երազանքներ է թողնում կիսատ, ապրելու հույսեր, կյանքեր, սպասումներ... Այդ բառն էլ է հարմարվե՛լ քառակուսուն...

Ես անջատում եմ հեռուստացույցը եւ արտասովում այն ծաղկավոր ու ոչ ծաղկավոր կիսաբաճկոններով աղջիկների ու տղամարդկանց փոխարեն, ովքեր ստիպված են ամեն օր խոսել պատերազմից: Որքա՛ն դժվար է հայտնել ինչ-որ մեկի շիներու մասին, հայտնել գուցեւ առաջինը բոլորից, իսկ հետո... հետո գո՞ւցե մեկը քարանա՛քեզ լսելով, մղկտա ցավից... Ա՛խ, այդ քառակուսին, որ մեղավոր չէ, որ քառակուսի է, ստեղծված է խոսելու համար...

Երնեկ անջատվող հեռուստացույցի նման լռեր նաեւ պատերազմը, կամ էլ՝ երնե՛կ պատերազմն էլ հեռուստացույց լիներ, մի օր փչանար, ու ոչ ոք հանձն չառներ այն վերանորոգել. պատերազմը հանգչեր քառակուսու մեջ...



Թրաշուշանները գարուն են ուզում

Ռեպի հայրենի գյուղ տանող ճանապարհին անցնում է սրտիս միջով: Արյունս հիշողության գետ է դառնում, եւ հուշերս պարզում են ճերմակ առագաստները...

Թթենիների միջով ձգվող ճամփան ցեխոտ է, տեղ-տեղ կուտակված անձրեւաջրերը մեծ փոսեր են առաջացրել: Մեքենայի անիվները դժվարությամբ հաղթահարում, թվում է՝ կռիվ են տալիս ցեխաջրերի հետ: Մեքենան համառ է, ավելի ճիշտ, վարորդն է փորձառու. հարյուր տարվա վարորդ է, գյուղերի ճանապարհների գիտակ:

- Բոլոր գյուղերի ճանապարհներն իմ կենսագրությունից ավելի լավ գիտեմ,- կատակում է:

Թթենիները նույնն են մնացել, միայն մի բան է փոխվել. այնտեղ այլևս չեն լինում սիրահարների թաքուն հանդիպումներ. սիրահարներն են գյուղում քչացել, թե՛ ուրիշ ավելի գեղեցիկ վայրեր կան հանդիպման համար: Թթենիները մենակ են մնացել. խեղճ թթենիներ՞ը, երեւի նրանք էլ կարոտում են հին ու լավ օրերին, երբ ականջ ականջի լսում էին սիրո թաքուն խոստովանություններ եւ մի քիչ ամաչկոտ, մի քիչ պարծենկոտ սվսվում...

- Բարեւ, թթենիներ,- ասում եմ՝ մեքենայի բաց պատուհանից նայելով նրանց անձրետոտ տերեւներին:

Վարորդը շվարած ետ է նայում, եւ զարմացած ժպիտը մի պահ կանգ է առնում թավ բեղերի վրա. երեւի մտածում է՝ այ՛քեզ գիժ, բայց մտածածը թաքցնելու համար ուրիշ բան է ասում.

- Կարոտե՞լ եք:
- Կարոտել եմ:
- Ի՞նչն եք կարոտել:
- Ամեն ինչը:

Լռություն...Լռությունը խառնվում է ցեխաջրերին, եւ չը՛մփ ցեխաջուրը ողողում է մեքենայի ապակիները:

- Թու՛,- ասում է վարորդը եւ վառում ծխախոտը: Մեքենայի դիմացի հայելու մեջ նա գտնում է իմ ժպիտը, իսկ ես՝ նրա՝ զայրույթով լի աչքերը: Ես փախչում եմ նրա աչքերից, որ թաքուն ժպտամ...

Այս վայրերով պատերազմն է անցել, ու թեւ դա 25 տարի առաջ էր, բայց հողը դեռ վիրավոր է: Ահա երեսաց վայրի թրաշուշանների անձայ-

րածիր փունջը՝ գարնան աճրետով ողողված: Փունջը մեկընդմեջ ընդհատվում է. մոտեցողը կտեսնի՝ ընդհատված տեղերում պատերազմի հետքերն են: Ծաղիկներն ասես խորշում են դրանցից...

Թրաշուշանների բույրը ներս է մտնում մեքենայի պատուհանից եւ խառնվում հիշողություններիս, հիշողություններս գարնան շունչ են առնում:

- Կարո՞ղ եք կանգ առնել մի քանի րոպե:

Պատասխանի փոխարեն վարորդը արգելակում է մեքենան:

Ես սկսում եմ ազահորեն պոկել ծաղիկները՝ մոռանալով, որ ցեխաջուրը լցվում է կոշիկներիս մեջ: Ծաղիկների փունջը սեղմում եմ կրծքիս. սիրտս ու ծաղիկները ջերմանում են: Քայլում եմ առաջ: Ծանոթ հուշաքարին մի փոքրիկ թռչուն է նստել եւ անշարժացել ասես: Թռչունը չի թռչում մոտեցող քայլերից: Թրաշուշաններն ինձ հետ կռանում են, եւ ես ու ծաղիկները խոնարհվում ենք սառը քարին: Հուշաքարի վրա գրված անունները կարոտներ են. ոմանց այցելում եմ, ոմանք էլ այցելուի են սպասում: Ես համբուրում եմ բոլորի անունները՝ բոլորի զավակների փոխարեն:

- Հենց այստեղ է հայրս անմահացել, երբ մարտի էր տանում տղաներին,- ուզում եմ թեքվել եւ ասել վարորդին, բայց նա շրջվել եւ փնթփնթալով մեքենայի ապակիներն էր մաքրում:

Մի պահ խորհում եմ անցյալի ու ներկայի մասին. այսօր, առավել քան երբեւ, նրանք նման են՝ ներկան ու անցյալը, նման է նաեւ մի բան՝ ապագայի անորոշ տեսլականը: Ես ապագայի մասին չեմ ուզում մտածել, ներկան է հուզում, որովհետեւ ապագա կոչվածը ներկայի գույները պիտի ունենա: Ներկայի գույները մտահոգում են, որովհետեւ նրանցում շատ են անցյալի երանգները. այդ երանգները պատերազմոտ են: Ես ուզում եմ, որ հավետ ջնջվեն այդ երանգները, բայց վայրի թրաշուշանների մեջ երեսցող փոսերը հուշում են նրանց գոյության մասին... Ծաղիկները շրջանցել են այդ փոսերը, ասես՝ նրանք էլ են խորշում պատերազմից: Անկենդան փոսե՛ր...

Թռչունը թռչում է: Երկնքում ամպեր կան, բայց թռչունը երեւում է, թեւ փոքրիկ է: Հետո թռչունը խառնվում է ամպերին: Ամպերի միջից մի վառ ճառագայթ գրկում է հուշաքարը. սառը քարը ջերմություն է առնում: Ես ձեռքս դնում եմ ջերմացող քարին, մատներս արեւանում են: Ոչ ոք չի խառնվում մեր լռությանը, միայն երբեմն-երբեմն հեռվից՝ դիմացի բլրից այնկողմ, կրակոցներ են լսվում...

Վեր եմ կենում ու նայում հեռուն. այնտեղ, ուր դեռ չեն վերջանում



թրաշուշանները, զինվորական տասնյակ վրաններ են երեսում: «Պատերազմը դեռ շրջում է այս կողմերում», - մտածում են եւ հեռվից ձեռքով անում չգիտեն թե ում: Չգիտես թե ով՝ զինվորական շորերով, հեռվից բարեիս պատասխանում է՝ ձեռքը թափահարելով: Ես երկու ձեռքս բարձրացնում են եւ նորից բարեւում՝ այս անգամ ներքին անբացատրելի ոգեւորությամբ...

- Պատերազմը չի վերջացել... Իսկ թրաշուշաններն ուզում են, որ միշտ գարուն լինի,- ասում են քթիս տակ՝ կամաց մոտենալով վարորդին, ով արդեն հասցրել է ծխախոտի տուփը դատարկել:

- Դուք հավատո՞ւմ եք, որ պատերազմը մի օր կավարտվի,- դառնում են նրան:

- Ես արդեն ոչ մի բանի չեմ հավատում,- ասում է միանգամից:

- Երեք տղաներս սահմանին են,- նայելով աչքերիս մեջ՝ շարունակում է նա,- երբ տուն են գալիս, ասում են՝ պա՛պ, ի՞նչ ես խոժոռվել, ամեն բան լավ կավարտվի, մեծ մարդ ես, «դուխդ» տեղը պահիր: Իսկ ես ասում եմ՝ երբ որդի ունենաք, էն ժամանակ կհասկանաք ինձ:

Նա նստում է մեքենայի դեկին:

- Ես մի քիչ անհավատ մարդ եմ... Իսկ դու՞:

Նրա աչքերում գտնում եմ տխրության ստվերներ:

- Ես արդեն 25 տարի է՝ նույն երազանքով եմ ապրում:

- Իսկ ինչո՞ւ չես գնում, ոմանք գնացել են, ռուսաստաններում են:

Կարող ես գնալ, բայց երազանքդ պահել սրտումդ:

- Ես այստեղ ինձ ապահով եմ զգում:

- Ապահո՞վ, բայց այստեղ կռիվ է:

- Սա բոլորիս կռիվն է...

- Երեսում է՝ պինդ ջահել ես...

Ծիծաղում է:

Յեխաջուրը խլում է նրա ձայնի ելեւէջները, եւ ականջներս լցվում են անսովոր աղմուկով:

- Պա՛-տե՛-րա՛զմ...

Մի վերջին անգամ թրաշուշանների բույրը թափանցում է հոտոտելիքներս:

- Գա՛-րու՛ն...

Ճանապարհին մարդիկ են կանգնած: Գյուղի ավտոբուսը մնացել է ցեխի մեջ եւ առաջ շարժվել չի կարողանում: Տղամարդիկ փորձում են հրել առաջ, չի ստացվում:

- Բարեւ, ժողովուրդ, ինչո՞վ կարող եմ օգնել,- վարորդը մոտենում է

ավտորուսին:

«Բարեւ»-ի հետ բոլորը ժպտում են: Բոլորը ծանոթ դեմքեր են:

- Մենակ թե ավտորուսի մասին չգրես,- ինձ նկատելով՝ ասում է խա-  
նութպան Աշոտը: Բոլորը քահ-քահ ծիծաղում են:

- Չէ՛, չէ՛, թող գրի, բա էսպիսի բան կլինի՞, 100 տարի է՝ էս ավտորու-  
սը մնում է էս նույն ցեխի մեջ:

- Գու ավտորուսից խի՞ ես բողոքում, ճանապարհներից բողոքիր,  
ճանապարհս ո՞րն է, մի «ճ»-ը է մնացել,- կատակում է հաստիկ մեկը:

- Որ հարստանաս, մի կարգին ավտորուս կգնես էս գյուղի համար:

- Չէ՛, որ հարստանա, ճանապարհը սարքել կտա, խղճով աղջիկ է...

- Անպայման կհարստանամ,- կատակում են ի պատասխան:

- Մեքենայում տեղ կա, կարող ենք մի քանի հոգու տեղավորել մեզ  
հետ,- ասում է վարորդը:

- Չէ՛, չէ՛,- ասում են ամեն կողմից, բա մեր վարորդին մենա՞կ թող-  
նենք ավտորուսի հետ, միասին եկել ենք, միասին էլ կգնանք, դուք հան-  
գիստ գնացեք:

Ավտորու՛ս... Ուսանողական տարիներիս վկան...

Վարորդը երկար ազդանշան է տալիս, որ հաջողություն ասելու  
նշան է:

Ծանոթ դեմքերը ես զետեղում եմ սրտիս մեջ, եւ սիրտս լցվում է մի  
այնպիսի զգացումով, որ ավելի վեր է, քան բարությունը: Դա մի այնպի-  
սի զգացում է, որպիսին ունենում ես կուսական բնության գրկում:

- Այս մարդիկ բնություն են,- ասում են մտքիս մեջ...

Գյուղի սկզբում երկու թոնիր կա, երկուսի դռներն էլ փակ են, մետա-  
ղալարով ամուր կապված, երեսում է՝ վաղուց չեն բացվել: Հիմա ո՞վ է  
գյուղում թոնիր վառում, հագիվ մեկ-երկու հոգի, ջահել հարսներն ար-  
դեն չեն օգտագործում թոնիրները: Գյուղի խանութն ամեն օր թարմ հաց  
է ստանում, բոլորն այնտեղից են հաց գնում կամ էլ տանը՝ ջեռոցում են  
թխում:

Թոնրահացի բույրը կախվել է մետաղալարով կապկպված փակ դռ-  
ներից: Դուռը ճռռոցի է կարոտ, իսկ հացը՝ բույրի... Հաց թխող չկա՛...

Խեղճ թոնիրնե՛ր...

Մայրս մեզ դիմավորում է նույն բարի ժպիտով, որ ուներ հազար  
տարի առաջ: Այդ ժպիտը չի ծերանում:

- Մեղանը պատրաստ է, եկե՛ք, եկե՛ք:

- Չէ՛, ես գնում եմ,- ասում է վարորդը,- օրը մթնում է:

- Ի՞նչ եք ասում, առանց հաց ուտելու տղամարդը ճանապարհ կգ-

նա՞: Անոթ է, ներս եկեք:

Վարորդը չի համառում:

Տաք վառարանը հիշեցնում է դպրոցական տարիներս: Վառարանի կողքին փոքրիկ խալի էի փռում եւ դասերս այնտեղ սովորում:

- Գետնին մի նստիր, կմրսես,- թախանձում էր մայրս:

- Չէ՛, այստեղ հեշտ եմ սովորում:

Մայրս չորացրած մրգերով լի ամանը դնում էր կողքիս:

-Հա՛մ սովորիր, հա՛մ կեր...

Իմ սիրելի վառարա՛ն...

- Դե նստե՛ք, քաղցած կլինեք,- մորս ձայնը շոյում է ականջներս...

... Արեւը դեմքը թեքում է դեպի մայրամուտ: Ամենագեղեցիկ մայրամուտը մեր գյուղի մայրամուտն է: Այն միայն տեսնել ու զգալ է պետք՝ համոզվելու համար...

- Դե՛, ես գնացի, արդեն ուշ է, շե՛ն կացեք, շնորհակալ եմ հյուրասիրության համար,- վարորդը վեր է կենում:

- Մպասե՛ք, սպասե՛ք,- ես վազում եմ դեպի պայուսակա՝ հիշելով, որ չեմ վճարել ճանապարհածախսը:

- Հարկավոր չէ, հաջորդ անգամ...Ես առաջին անգամ միշտ անվճար եմ տանում:

- Ի՞նչ եք ասում, կանգնե՛ք, ինչպե՞ս թե...

- Մի օր էլ դուք ինձ լավություն կանեք...երբ հարստանաք,- խորհրդավոր ժպտում է եւ արագ դուրս գալիս:

- Ինչ տարօրինակ մարդ է,- ասում է մայրս,- որտեղի՞ց ես գտել:

- Ծանոթս է խորհուրդ տվել:

Գիշերը թանձրանում է գյուղի վրա, բայց ոչ ոք չի վառում լույսերը:

Մայրս վառում է հին լամպը:

- Ինչու՞ ոչ մի տան մեջ վառ լույս չկա,- հարցնում եմ զարմացած:

- Գյուղապետն է այդպես հրահանգել, ասաց՝ եկեք մի քիչ զգույշ լինենք, աշխատեք լույսերը չվառել՝ թշնամու անօդաչու սարքերի աչքից հեռու մնալու համար:

Լամպի աղոտ լույսը նկարում է մորս բարակ մատները: Այնքան բարություն կա այդ մատների մեջ, որ աշխարհի ոչ մի ծայրում չես գտնի:

- Չե՞ս վախենա, եթե հանկարծ կրակոցներ լինեն:

- Չէ՛, ես ինձ այստեղ ապահով եմ զգում,- ասում եմ եւ գլուխս խոնարհում նրա մատներին...



**Նոր տարի, որ դեռ պիտի գա կամ անցնող տարվա երազը**

«Երնեկ, թե այս Նոր տարին...». ծանոթ սրճարանի մոտով ացնելիս ականջներս դրսում են ծանոթ երգի բառերը, որոնք, ինչպես ամեն անգամ, այս անգամ եւս չեն թողնում առաջ քայլել, ստիպում են կանգնել եւ լարել լսողությունս այնպես, ասես՝ առաջին անգամ եմ լսում երգի տողերը:

Մոտակա նստարանն ազատ է, բայց չեմ նստում, թվում է՝ այսպես կանգնած ավելի լավ եմ մարսում երգի բառերը, եւ այն անբացատրելի արագությամբ թափանցում է մարմինս, հայտնվում երակներովս հոսող հեղուկի մեջ եւ արդեն չեմ զգում՝ տաքացնու՞մ է, թե՞ սառեցնում, միայն զգում եմ մի բան՝ երբեւէ այսպիսի զգացողություն չեմ ունեցել...

Արդեն քանի տարի է՝ լսում եմ այս երգը, եւ արդեն քանի տարի է՝ հավատում եմ «երնե՛կ»-ին, որն այդպես էլ մնում է հասարակ մի բառ՝ «երնե՛կ»՝ մնալով իր մեջ ամփոփված անհասանելի իմաստին հավատարիմ: Արդեն քանի տարի է՝ հավատում եմ հայի վերջացող ցավերին, չարի կորստին ու բարու հաղթանակին, հավատում եմ այնպես, ինչպես մանուկ ժամանակ հավատում էի տատիս հեքիաթներին, որտեղ միշտ հայտնվում էր անհաղթ հերոսն ու գլխատում յոթգլխանի հրեշներին՝ փրկելով արքայադստերը գերությունից: Հավատում եմ ու ամեն անգամ դեռատի պատանու պես բախվում իրականությանը, հասկանում, որ կյանքը հեքիաթ չէ, որ կյանքում չարը երբեք չի կորչում, եւ հրեշներն էլ միշտ չէ, որ գլխատվում են: Կյանքում ամեն բան այլ է, քանզի այն ինչ- որ մեկի ձեռքով գրված հեքիաթ չէ, այն ամեն օր փոխվում է ինչ-որ մեկի, մեր բոլորի ձեռքով, եւ երբեմն՝ մենք չենք կարողանում ճիշտ դեկավարել նրա ընթացքը՝ տանելով այն խտոր ուղղությամբ...

Ծանոթ սրճարանից քիչ այնկողմ գրություն է կախված՝ շատ մեծ-մեծ տառերով. «Թող Նոր տարին խաղաղություն բերի»: Խաղաղություն՝ այս բառը խառնվում է երգի չմարող հնչյուններին: Ես քթիս տակ կրկնում եմ մերթ երգի բառերը, մերթ՝ ծանոթ բառը՝ Խա՛ղա՛ղո՛ւ-թյու՛ն: Մտածում եմ՝ տեսնես այս ցուցանակը գրողը կամ կախողը, կամ էլ այն պատվիրողը նույնպես ունեցե՞լ է այս զգացողությունը, նույնպես մտածե՞լ է այս բառի մոգական ուժի եւ այն ունենալու անբացատրելի ցանկության մասին, տեսնես նա՞ էլ երբեւէ հավատացել է իր տատի հե-

քիաթներին ու երազել է յոթգլխանի հրեշներին կործանելու եւ արքայադստերը փրկելու մասին... Տեսնես նա՞ էլ երբեւէ անցել է այս ծանոթ սրճարանի կողքով եւ կամ մեկ այլ վայրում լսել այս երգը... Տեսնե՞ս... Մտքերիս ալեկոծումը կանգ է առնում կողքովս անցնող կնոջ ձայնից.

- Դու հավատու՞մ ես այս երգի բառերին:
- Այո՛, ինչու՞ չէ,- պատասխանում եմ անծանոթ մի շեշտով:
- Ես չեմ հավատում:
- Ինչո՞ւ:

- Որվիտես եւ այս Նոր տարին էլ մենակ պիտի դիմավորեմ, մենակ պիտի սեղան նստեմ. մենակ ի՞նչ Նոր տարի: Այս Նոր տարում երազանք չեմ պահի, որովիտես ամեն տարի նույն երազանքն եմ պահում եւ մի ամբողջ տարի սպասում եմ, որ վերջում դարձյալ նույն երազանքը պահեմ ու...

- Այս տարի հաստատ կկատարվի ձեր երազանքը:
- Չէ՛...

Վերջին «է»-ն երկարում է. երկարում է այնպես, ինչպես փոքրիկի բերանից նոր հանված ծամոնը, որը նորից պիտի հայտնվի փոքրիկ բերանում ու նորից ծամվի, բայց արդեն չունենալով նույն համն ու հոտը...

- Իսկ դու կարո՞ղ ես այս անգամ իմ փոխարեն երազել, գո՞ցե կատարվի:

- Այո՛, կփորձեմ, բայց ի՞նչ երազեմ:

- Երազիր, որ այս տարի Ամանորի սեղանի շուրջ նստած մայրը կարոտով չհիշի իր որդուն, ով այլեւս տուն չի գա եւ այլեւս չի ասի՝ մա՛մ, թող այս տարին քեզ առողջություն բերի: Երազիր, որ սեղանի շուրջ նստած մանուկը անհամբեր չսպասի, որ Ձմեռ պապիկի հետ ներս կմտնի նաեւ իր հայրիկը, ում ամենեւին էլ Ձմեռ պապիկը չի տարել, այլ սարերից այն կողմ որոտացող գնդակները (Չէ՛, Ձմեռ պապն այդ վայրերով հաստատ չի անցնում, թե չէ նրան էլ չեն խնայի գնդակները)... Երազիր, աղջիկս, լավ երազիր, գո՞ցե ես չգիտեմ, թե ինչպես եմ ճիշտ երազում, եւ չեմ կարողանում այնպես երազել, որ այն կատարվի: Չէ՛, հաստատ, ես ճիշտ չեմ երազում, այլապես ինչու՞ իմ երազանքը երբեք չի կատարվում... Չէ՛...

Վերջին «է»-ն նորից երկարում է՝ այս անգամ կախվելով նրա հեռացող ոտնաձայներից՝ նմանվելով մերթ խուլ հառաչանքի, մերթ հավատացյալի կամացուկ աղոթքի...

Ես ուզում եմ վազել կնոջ ետեւից՝ չզիտեմ, թե ինչո՞ւ, չզիտեմ, թե ինչ ասելու համար: Քարացած ոտքերիս տակ մնում եմ նրա «Է»-ի մահացած հնչյունները: Այդ պահին աչքերս թափանցում եմ սրճարանից ներս եւ գտնում երկար բոյով, կոկիկ հագնված բարմենի առույգ դեմքը, ով շարժվում է դեպի ձայնարկիչը եւ ձեռքի թեթեւ շարժումով նորից միացնում ծանոթ երգը.

«Երնեկ, թե այս Նոր տարին»...

## ԼՈՒՍԱՍՈՒՏ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ...

Վերնագիրը՝ հետո...



## Շարունակությունը

Պապս գյուղամիջում սովորականի պես նարդի էր խաղում:

- Հը՞, Ժորիկ, էլի հաղթեցի՞ր, ախր ո՞նց ես անում, որ ամեն անգամ հաղթում ես:

- Ոչ մի բան էլ չեմ անում, դու ես շատ վատ խաղում,- պապս կատակում է:

Մեկ էլ այդ պահին ծանոթ մի ձայն հասնում է գյուղամեջ:

- Ժորիկ, Ժորիկ, երեխան ծնվել է:

Նարդու զառերը կանգ են առնում պապիս ափի մեջ, քարանում, սառնում:

- Ժորիկ, տղա է, տղա, Հերմինեն տղա է ունեցել, աչքը լույս,- հեի-հեի գյուղամեջ է հասնում հարեան Սեդան:

- Տղա՞ է, հա՞, տղա՞ է ասում ես,- պապս կանգնում է եւ ասես՝ ուզում է ինչ-որ կարեւոր բան ասել,բայց չի ասում, մնում է տեղում կանգնած:

- Հը՞, Ժորիկ, ի՞նչ են կոչելու ծոռանդ, չգիտե՞ս,- ասում է ուստա Աշոտը:

- Ես գիտեմ, արդեն հարցրել եմ... երեխուն Արմեն են կոչել,- ասում է Սեդան:

Տաք, շա՛տ տաք մի բան պատում է պապիս մարմինը, նա զգում է, որ ուր որ է՝ սիրտը կայրվի այդ հոսանքից, բայց դա նրան հաճելի է...

- Ար-մեն,- նա մտքի մեջ տասնյակ անգամ արտասանում է անունը: Միթե նորից պետք է այդ անունով մեկին գրկի, իսկ նա կճշա, լաց կլինի, չորեքթաթ կտա, առաջին քայլերը կանի, կվազվզի: Իսկ գու՞ցե նա կունենա նույն դիմագծերը, գու՞ցե նույն աչքերն ունենա, գու՞ցե, գու՞ցե...

- Արմեն, հալալ լինի անունը դնողի կերած կաթը,- ասում է Աշոտը եւ օրհնում,- հորով-մորով լինի, պապի պես կտրիճ լինի:

- Հը՞, Ժորիկ, ա՛յ տղա, ի՞նչ ես քարացել, գնա՛, գնա՛ մի պատրաստություն տես, հո եղպես չէ կարգը,- ասում են ամեն կողմից:

- Հա՛, հա՛, բա ո՞նց,- ասում է պապս եւ շվարած քայլում դեպի տուն: Ուրախությունը պատել էր սիրտը, այդպիսի ուրախություն նա դեռ չէր զգացել, ասես՝ ինչ-որ մեկը նրան էր վերադարձրել վաղուց կորած, բայց անչափ կարեւոր մի բան...

- Դա է շարունակությունը, Ժորիկ, դա՛ է, սիրտդ լե՛ն պահիր, էլ չընկճվես,- պապիս ականջին է հասնում ուստա Աշոտի ձայնը:

- Շարունակությու՛նը,- պապս հագար անգամ այն արտասանում է ինքն իրեն... Բառը ապրեցնում է:



ՀԵՐՄԻՆԵ ԱՐՄԵՆԻ ԱՎԱԳՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ...  
ԱԶՔԵՐ...  
ԾԱՂԻԿՆԵՐ...

Խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան  
Համ. շարվածքը՝ Անահիտ Գրիգորյանի  
Էջադրումը՝ Մարինա Ավանեսյանի  
Կազմի ձեւավորումը և նկարազարդումը՝  
Լիաննա Քոչարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 70x108 <sup>1</sup>/<sub>16</sub>:  
Ծավալը՝ 4 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Յ. Յակոբյան, 25